Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՁԳՈՒՇԱՑԵՔ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՑ

(մասոնա-սիոնա-հրեա-թուրք
հակահայկական քառանկյունին)

ԵՐԵՎԱՆ – 2002

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ջ - 469

Առաջաբանը գրեց, խմբագրեց, ծանոթագրեց ու հրատարակության պատրաստեց պատմական գիտությունների թեկնածու Գեւորգ Յազըճյանը: Տպագրությանն իր օժանդակությունն է բերել բեյրութաբնակ հայրենասեր մի գործարար:

Ջ - 469 Ձգուշացե՛ք կեղծ բարեկամներից (մասոնա-սիոնա-հրեա-թուրք հակահայկական քառանկյունին).- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2002, 86 էջ:

Գրքույկում թարգմանաբար վերատպվել են պաղեստինցի արաբ պատմաբան Մարվան Բուհեյրիի «Թեոդոր Հերցլը եւ Հայկական հարցը» գիտական ուսումնասիրությունը, Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանի 1910թ.-ի գաղտնի մի զեկուցագիրը իր պետության արտաքին գործերի նախարարին եւ բրիտանացի հռչակավոր հետախույզ Արաբիայի Լորենսի հետ կատարված մի հարցազրույց: Այս նյութերը կասկած չեն թողնում, որ Հայկական հարցը ծեռնածության ու քաղաքական բազարի առարկա է եղել սիոնականների, հրեաների ու մասոնների համար, թուրքերի համար հայոց ցեղասպանությունը՝ ծրագրավորված պետական քաղաքականություն, իսկ նրանց ու բրիտանացի կայսերապաշտների համար հայոց բնաջնջումը անհրաժեշտ նախապայման Հայկական լեռնաշխարհի բնական հարստություններին տիրանալու համար:

Գրքույկը նախատեսված է պատմաբանների, պատմությամբ հետաքրքրվողների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930 - 4 - 070 - 3

© Գեւորգ Յազըճյան, 2002

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում երեք տարբեր հրատարակություններ, որոնք վերաբերում են մասոնության, սիոնականության, հրեության եւ բրիտանական կայսերապաշտության հակահայկական էությանն ու ծրագրերին: Այդ նյութերից առաջին երկուքը հայերենով լույս են տեսնում առաջին անգամ:

Հրատարակություններից առաջինն է ռուսերեն թարգմանությունից կատարված հայերեն թարգմանությունը պաղեստինցի արաբ պատմաբան Մարվան Բուհեյրիի «Թեոդոր Հերցլը եւ Հայկական հարցը» անգլերեն հոդված-ուսումնասիրության՝ զետեղված «Պաղեստինյան հետազոտությունների ամսագրի» էջերում (<Journal of Palestine Studies>, vol. VII, N 1, Autumn, Beirut, 1977, pp. 75-97): Ուսումնասիրությունը վերաբերում է Օսմանյան Թուրքիայում հայկական ազատագրական շարժմանը եւ դա սիոնական ծրագրերին ծառայեցնելու հրեա-սիոնական առաջնորդների խարդավանքներին: Այս ուսումնասիրությունից մեծապես օգտվել է լրագրող Հարություն Սարգսյանն իր «Սիոնիզմը Թեոդոր Հերցլից մինչեւ լորդ Ռոթշիլդը եւ Հայկական հարցը» անտիպ աշխատության մեջ, որից մի հատված լույս է տեսել Մոսկվայում հրատարակվող «Արմյանսկի վեստնիկ» ամսագրի 1999թ. թիվ 1-2 միացյալ համարում (էջ 151-164): Սակայն, հակառակ Մ. Բուհեյրիի, Հ. Սարգսյանը ո՛չ միայն արդարացնում է Թ. Հերցլի հայկական «բազարը», այլեւ՝ այս սիոնական գործչի գովերգանքն է կատարում...

Մ. Բուհեյրիի ուսումնասիրության անգլերեն բնագրից ռուսերեն թարգմանությունը իրականացվել է ՀԽՍՀ ԳԱ Արեւելագիտու-

թյան ինստիտուտի գիտաշխատող Գ. Մ. Գրիգորյանի, իսկ ռուսերենից հայերեն թարգմանությունը՝ Անի Հերթևցյանի կողմից:

Այս գրքույկում կրճատել ենք Մ. Բուհեյրիի ուսումնասիրության առաջին գլուխի («Հայկական հարցը մինչեւ 1896 թվականը») հիմնական հատվածը, որը օտար ընթերցողին պատկերացում է տալիս Հայկական հարցի էության ու բնույթի մասին եւ որը հայ ընթերցողի համար հատուկ հետաքրքրություն չի ներկայացնում: Պահպանել ենք այս գլխի միայն վերջին հատվածը, որը վերաբերում է Թ. Հերցլի գործունեությանը:

Երկրորդ հրատարակությունն է լոնդոնաբնակ արաբ պատմաբան Էլի Կեդուրիեի՝ առաջին անգամ հրապարակած հույժ կարեւոր մի փաստաթուղթը՝ Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջերալդ Լոուքրի «գաղտնի, անձնական եւ մտերմական» նամակը իր պետության արտաքին գործերի նախարար Չարլի Հարդինգին (Մեծ Բրիտանիայի Ֆորեյն օֆիսի դիվան, Լոուքրի թղթեր, թիվ F. O. 800/193 A): Փաստաթուղթը առաջին անգամ լույս է տեսել Լոնդոնում հրապարակվող «Միջինարեւելյան ուսումնասիրություններ» ամսագրի (<Journal of Middle Eastern Studies>) 1971թ. թիվ 1-ում՝ իբր հավելված նույն համարում է. Կեդուրիեի «Երիտթուրքերը, մասոնները եւ հրեաները» հոդվածի: Իր հոդված-ուսումնասիրությունում Կեդուրիեն վերլուծում է փաստաթղթի տեղեկությունները ու դիտարկումները:

Այս փաստաթղթին ծանոթ է եղել Հայկական հարցի մեծ նվիրյալ, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար, պատմաբան Ջոն Կիրակոսյանը, որը դա օգտագործել է իր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» հայերեն երկհատոր եւ նույնանուն ռուսերեն միահատոր աշխատության մեջ: Փաստաթղթի՝ հայությանը վերաբերող հատվածների ուսումնասիրական-վերլուծական անստորագիր հոդված («Մեծ եղեռնի թաքնված պատասխանատուները» վերնագրով, որը հեղինակել է Գեւորգ Յազըճյանը) է լույս տեսել 1984թ.-ին՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ - օտար անվան հապավումով՝ ASALA) «Հայաստան» պաշտոնաթերթի Դ. տարի, թիվ 99-100 բացառիկ համարում (էջ 21-26), որը թարգմանաբար լույս է տեսել նաեւ նույն պաշտոնաթերթի օտարալեզու տարբերակներում: ՀԱՀԳԲ-ի Տեղեկատվական բաժանմունքը 1980-ականների սկզբին հայերենով ու արաբերենով հրատարակել է «Սիոնականության դերը Հայկական հարցին մեջ» գրքույկը, որը արտատպումն է Ջ. Կիրակոսյանի գրքից երիտթուրք-սիոնա-մասոնական կապերին վերաբերող հատվածների:

Փաստաթուղթը, հապավումներով, լույս է տեսել Մոսկվայում 1999թ.-ին հրատարակված, Յու. Վորոբեւսկու՝ «Ճանապարհ դեպի Ակրոպոլիս. Օձի քայլը» գրքում, որից արտատպել է Երեւանի «Գոլոս Արմենիի» ռուսալեզու օրաթերթն իր 2001թ. ապրիլի 19-ի համարում (էջ 6): Այսուհանդերձ, այս փաստաթղթի՝ հայերին վերաբերող հատվածների հայերեն թարգմանությունը սույն գրքույկով լույս է տեսնում առաջին անգամ:

Հրատարակվող երրորդ նյութն է ամերիկացի ճանաչված լրագրող Լինկոլն Ստեֆընսի հարցազրույցը Արաբիայի Լոուրենսի հետ՝ կատարված Փարիզում, Խաղաղության խորհրդաժողովի ընթացքում, 1919թ.-ին: Հարցազրույցը տպագրվել է ամերիկյան «Սուտլուկ էնդ ինդիփենտընթ» (<Outlook and Independent>) շաբաթաթերթի 1931թ. հոկտեմբերի 14-ի համարում (էջ 203-205 եւ 222-224): Հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տե-

սել Երեւանի «Գարուն» ամսագրի 1994թ. 10-րդ համարում: Մեկ այլ թարգմանություն անգլերեն բնագրից կատարել ու Երեւանի «Ազգ» օրաթերթի 2000թ. սեպտեմբերի 28-ի համարում հրապարակել է վաստակաշատ գրող եւ թարգմանիչ Կարպիս Սուրենյանը: Թարգմանությունն առանձին գրքույկով լույս է տեսել 2001թ.-ին՝ «Շեմ» հրատարակչության կողմից՝ «Այդ անտանելի հայերը» աղավաղված վերնագրով: Շնորհակալություն հայտնելով պր. Սուրենյանին իր կատարած թարգմանությունը վերահրատարակելու թույլտվության համար, այստեղ մենք վերահրատարակում ենք թարգմանության հիմնական մասը՝ հապավելով բովանդակության հետ էական առնչություն չունեցող, հիմնականում գեղարվեստական բնույթի տողերն ու նախադասությունները:

Վերոնշյալ երեք նյութերը միացյալ գրքույկով հրապարակելով, նպատակ ենք ունեցել աշխարհասփյուռ հայությունը, մասնավորաբար նրա հայրենաբնակ հատվածը զգուշացնել կեղծ բարեկամների թակարդներից: Պատմությունից պետք է դասեր քաղել: Իսկ այդ դասերը, կապված հրատարակվող նյութերի հետ, հետեւյալներն են.

- Կոստանդնուպոլսի հայ վերնախավը, կտրված բուն Հայրենիքից, պատրանքներ ուներ, թե կարելի է Օսմանյան կայսրությունը բարենորոգումների միջոցով արդիականացնել, այսինքն՝ վայրենի թուրքը «քաղաքակրթել»: Մինչդեռ, ինչպես Նժդեհն է դիպուկ նկատել տալիս, թուրքը, «քաղաքակրթվելով», առավել վտանգավոր էր դառնալու, քանի որ փոխելու էր իր արտաքին վարվելակերպը, բայց ոչ երբեք՝ իր էությունը: Եվ պատահական չէ, որ Մեծ եղեռնը ծրագրողների ու իրականացնողների մեջ քիչ չեին բարձ-

րագույն կրթության տիրացածները: Այսօր էլ հայոց մեջ, ոչ առանց օտարների աջակցության, քիչ չեն թուրքերի քաղաքակրթվածության ու նրանց հետ բարեկամության կոչ անող մունետիկները:

- Հայոց մեջ, հիմնավոր թե անհիմն, ընդունված կարգ է դարձել զուգահեռներ անցկացնել մեր եւ հրեաների միջեւ: Շատ քչերն են քաջությունն ունեցել բարձրաձայն հայտարարելու, թե միջազգային հրեությունը, սիոնիզմը եւ նրանց ծառայող մասոնությունը հիմնական դերակատարություն են ունեցել հայոց ցեղասպանության ծրագրավորման ու իրականացման մեջ:

- Հայության ղեկավարության կարեւոր մեկ մասը՝ պետական այրեր, կուսակցական գործիչներ, եկեղեցականներ, սփյուռքահայ եւ հայրենաբնակ գործարարներ եւ այլն, այսօր եւս անդամակցում է մասոնությանը, եւ, դրանով, շարունակում իր իսկ ազգի ցեղասպանությունը: Մասոնները թափանցել են նաեւ Հայաստան. ս. թ. հուլիսի վերջին տեղեկատվություն տարածվեց հայանուն արտասահմանցի մասոնների երեւանյան «դեսանտի» մասին: Մասոն Զոհրապներ, Տաղավարյաններ, Ակնունիներ եւ ուրիշներ, մասոն լինելով, խաբվեցին իրենց մասոն հթթիհադական «եղբայրների» «բարենորոգչական» նշանախոսքերից, եւ բթացրին հայ ժողովրդի բնազդական դիմադրությունը գալիք արհավիրքի հանդեպ, թեեւ իրենք էլ իրենց կյանքով հատուցեցին իրենց մասոնական «եղբայրության»-հիմարացվածության գինը: Այսօր եւս, հայանուն մասոնները, աներեւույթ կերպով, իսկ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնախմբի» անդամները, նրանց համախոհ պատմաբանները, հայագետները, քաղաքական եւ հասարակական գործիչները, լրագրողները եւ ամբողջ այս ապազգային խաժամուժը շարունակում է

բթացնել հայ ազգի զգոնությունը՝ դուռը լայն բանալով հայության ու Հայաստանի վերջնական կործանման առաջ:

- Լոուրենսի հետ հարցազրույցը հատկանշական եւ ուսանելի է մասնավորաբար նրանով, որ նրանում բրիտանացի հռչակավոր հետախույզը չի թաքցնում հայերին կոտորելով վերացնելու, իսկ Հայաստանի հարստությունները օտար աշխատուժի միջոցով շահագործելու կայսերապաշտական ծրագրերը: Այսօր իրողություն է հայերի ավելի նուրբ կոտորածը՝ արտագաղթը Հայրենիքից, հայոց գերիշխանության տակ մնացած այս մի բուռ հողից: Իրողություն է նաեւ այն, որ օտար (ի դեպ՝ հայերի հետ ռասայական, կրոնական, մշակութային ոչ մեկ առնչություն չունեցող) տարրերը վերջին տարիներին ավելի ու ավելի են բազմանում Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի սեփականատիրոջը՝ բնիկ Հային փոխարինելու է գալիս օտարը՝ համաշխարհայնացման ծրագրերի ավելի հեշտ անցկացման նպատակով:

Այսօր եւս պատմությունը կարող է կրկնվել: Մասոնա-սիոնա-հրեա-կայսերապաշտական քառագլխանի հրեշը այսօր, հայկական միջավայրում իր անդամների, դրածոների եւ «հայացած» հրեաների միջոցով, խժռում է հայ ազգի առողջ մարմինը: Ի դեպ, սիոնականությունն ու հրեությունը, թաքնվելով «հակասեմականության դեմ պայքարի» նշանախոսքի ետին, ամեն կերպ փորձում են բթացնել հայության եւ ուրիշ ազգերի զգոնությունը, իսկ առողջ մտածողներին անմիջապես կպցնում «հակասեմականի» պիտակը: Նրանք «մոռանում են», որ սեմական ժողովուրդներ են նաեւ արաբները, ասորիները եւ այլ ժողովուրդներ: Իսկական հակասեմականը այլամերժ ու այլատյաց հրեաներն են, սիոնիզմը եւ Իսրայելի պետությունը, որոնք աշխարհի աչքի առաջ իրականացնում

են պաղեստինցի արաբ, սեմական ժողովրդի ցեղասպանությունը, իսկ մասոնա-սիոնա-հրեական վիշապի ճանկերում գտնվող աշխարհը լռում է, լռում, ինքը եւս վախենալով ֆիզիկապես կուլ գնալ այս հրեշի խարդավանքներին: Իսրայել պետությունն էլ, իր հերթին, քաջալերված Հայրենիքի ու Սփյուռքի մասոն կամ մասոնական լծի տակ գտնվող ղեկավարությունների կրավորական վերաբերմունքից, աշխուժացրել է Սուրբ տեղյաց մեջ հայոց պատկանող հողերի, մշակութային ժառանգության եւ այլ հարստությունների յուրացումը, այսինքն՝ օրը ցերեկով կողոպտում է ուրիշի ունեցվածքը՝ ճիշտ եւ ճիշտ հրեա-սիոնականների հոգեհարազատ թուրքերի նման, որոնք այս տարի մզկիթի են վերածել Կարսի Ս. Առաքելոց հռչակավոր մայր տաճարը:

Հրատարակելով այդ գրքույկը, մեր ժողովրդին կոչ ենք անում լինել զգոն, ոչ մի դեպքում չկորցնել առողջ դատելու գիտակցությունը եւ զգուշանալ կեղծ բարեկամներից:

Մասոնությունն ու սիոնականությունը, թուրքական ծավալապաշտության նման, թշնամին են հայ ազգին, որովհետեւ աշխատում եւ դավադրում են հայության ազգային օրինավոր ու պատմական շահերի դեմ:

ԹԵՈԴՈՐ ՀԵՐՑԼԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ծան. խմբ.- Էջատակի շեղագիր ծանոթագրություններով մեր կողմից տվել ենք անհրաժեշտ բացատրություններ:

Սիոնական շարժման եւ նրա առաջնորդների պատմագրական, այդ թվում՝ վարքագրական հետազոտությունները ներկայացված են լայն չափով: Դա հատկապես ճիշտ է այդ շարժման կնքահայր Թ. Հերցլի համար, որի անունը շարունակում է նկատելի տեղ գրավել գրականության մեջ. Դժվար թե հնարավոր լինի գտնել նրա կյանքի, անհատականության եւ եռանդուն գործունեության որեւէ կողմ, որն անգամ նվազագույն ուշադրության արժանացած չլինի[1]: Հերցլի գործունեության մեկ տեսանկյուն, սակայն, մոռացության է մատնվել. նրա նախաձեռնությունները Հայկական հարցի վերաբերյալ, ավելի որոշակի՝ նրա զուգահեռ փորձերը՝ հրահրված Բ. Դռան կողմից, նախ եւ առաջ համոզել Եվրոպայում գտնվող հայ հեղափոխական կոմիտեներին՝ ենթարկվել սուլթան Աբդուլ Համիդին, եւ, երկրորդ՝ ազդել եվրոպական մամուլի վրա, որպեսզի նա հատուկ նշանակության չարժանացնի Հայկական հարցը ու չափավորի իր հայամետ ուղղվածությունը:

Հատկանշական է, որ այդ նախաձեռնությունները Հերցլի ամենավաղ շրջանի քաղաքական գործողություններն են՝ իրականաց-

[1] Վերջին ժամանակներս Հերցլի երկու նոր կենսագրություններ են հայտնվել. Desmop Stewart, Theodor Herzl /New York: Doubleday and Co., 1974/ եւ Amos Elon, Herzl /New York: Holt, Rinehart, Winston, 1975/.

Ստյուարտը որոշակի ուշադրության է արժանացնում Հերցլի եւ Հայկական հարցի փոխհարաբերությունը, իսկ էլոնը՝ ոչ:

ված նոր ծնունդ առած սիոնական շարժման անունից եւ անցկացված 1897թ.-ին Բազելում Սիոնական կոնգրեսի առաջին գումարումից մեկ տարի առաջ: Հավասարապես կարեւոր է եւ այն փաստը, որ նրա միջամտությունը հատուկ տեղի ունեցավ Հայկական հարցի զարգացման այդ վճռական պահին, հարց, որը հայերի մեծամասնության համար թե՛ ազգային էր, թե՛ հեղափոխական:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՆՉԵՎ 1896 թ.[1]

. . .

Որպեսզի վերջացնենք Հայկական հարցի այս կարճ հետազոտությունը, հարկ է հիշել 1896 թվականի դրամատիկ իրադարձությունները: Վանի արեւելյան սահմանամերձ շրջանում հայկական երեք հեղափոխական կուսակցությունների միջեւ համագործակցության բացառիկ առիթ էր ներկայացել թուրքերի եւ քրդերի միացյալ հարձակումներից Վանի ու հարեւան քաղաքների պաշտպանության կազմակերպման առիթով: Ողջ հունիս ամսվա ընթացքում այդ արյունալի դեպքերն առիթ տվեցին Թեոդոր Հերցլի առաջին այցին Կ. Պոլիս՝ սիրիա-պաղեստինյան «Խարտիայի» եւ այն օգնության կապակցությամբ, որը սիոնական շարժումը կարող էր առաջարկել սուլթանին՝ Եվրոպայում հայկական կոմիտեների դեմ տարվող գործընթացում:

Օգոստոսին «Դաշնակցություն» կուսակցության անդամները կազմակերպեցին հանդուգն հարձակում Կ. Պոլսի Օսմանյան կայ-

[1] *Բազմակետով նշել ենք այս գլուխի նախորդ՝ հապավված մասերը:*

սերական բանկի վրա: Բանկից նրանց ուժով դուրս բերելու փորձերն ապարդյուն անցան, իսկ մարտիկները սպառնացին պայթեցնել շինությունը ներսում գտնվողների հետ միասին, եթե 48 ժամվա ընթացքում չընդունվի իրենց պահանջների ցուցակը: Բ. Դռան համաձայնությամբ, օտարերկրյա դեսպանները հանդես եկան միջնորդի դերում, համաձայնվեցին կատարել նրանց պահանջները եւ կազմակերպեցին մարտիկների անվտանգ մեկնումը երկրից: Քաղաքում անկարգություններ սկսվեցին, հայկական թաղամասը կողոպտվեց, իսկ բնակիչների մեծ մասը՝ սպանվեց:

«Հնչակ» կուսակցության համար 1896 թվականը տանջալի տարի էր: Նազարբեկի համախոհների եւ նրա հակառակորդների միջեւ անձնական եւ գաղափարական բախումները ճգնաժամային կետի հասան: Առաջինները հակված էին ծայրահեղ սոցիալ-դեմոկրատական դիրքերի կողմը, իսկ երկրորդները կուսակցության գործունեությունը ցանկանում էին ուղղել զուտ ազգայնականության կողմը: Պառակտիչների խումբը, որը գլխավորում էին Ա. Արփիարյանը եւ Լ. Բաշալյանը, հիմնադրեց «Վերակազմյալ Հնչակյան» նոր կուսակցությունը: Ոչ միայն «Հնչակ» կուսակցությունը, այլեւ ողջ հայկական հեղափոխական շարժումը, փաստորեն, ի վիճակի չէր մշտական համախմբվածություն պահպանել կամ միասնական ճակատով հարձակվել. վտարանդիության մեջ գտնվող կոմիտեները, տառապելով ներքին անհամաձայնություններից եւ հիասթափված եվրոպական տերությունների կողմից ձեռնարկված՝ Բ. Դռան խոստացած բարեփոխումների ձախողված փորձից, հանրագումարի էին բերում իրենց հեղափոխական հարձակումների արդյունքները: Նրանց նպատակներից մեկը՝ Եվրոպայի խղճի եւ հասարակական կարծիքի արթնացումը, իրականացել էր շատ բաներում. թուրքերին դատապարտող գրքերի եւ գրքույկների մի ողջ հոսք հայտնվեց հատկապես Անգլիայում, 1894-97թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում[13]: Այնուհանդերձ այդ բոլորի գինը հայ արհեստավորների եւ գյուղացիների կյանքն էր: Կոմիտեները չունեին միջոցներ՝ հավասար չափով գինելու եւ կազմակերպելու ողջ ժողովրդի պաշտպանությունը քաղաքներում, սարերում եւ Անատոլիայի հարթավայրերում: Հենց այդ ժամանակ Թ. Հերցլը, որը նոր էր սկսել իր սիոնական արկածախնդրությունը, սուլթանի հատուկ գործակալ Նելլինսկու կողմից համոզվել էր, որ հարկավոր է աշխատանք տանել ապահովելու հայկական հեղափոխական կոմիտեների անձնատվությունը, փոխարենն առաջարկելով արտոնություններ, որոնք հետագայում կարող էր ստանալ սիոնական դիվանագիտությունը Կ. Պոլսում, մասնավորապես գաղութային «Խարտիայի» կապակցությամբ, որի իրականացմանը նա պետք է հասներ Սիրիայի եւ Պաղեստինի համար:

ՀԵՐՑԼԸ, ՆԵՎԼԻՆՍԿԻՆ ԵՎ ՍՈՒԼԹԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մինչեւ 1895 թվականը, լրագրող, ազգությամբ հրեա, Թեոդոր Հերցլը ոչ մեկ բան ցույց չէր տալիս, թե նա երբեւէ լուրջ ուշադրություն կդարձնի իր համայնքի վարած քաղաքականության վրա կամ կկարողանա առաջադրել հրեական հատուկ հանրապետու-

[13] Sir Edwin Pears, Life of Abdul-Hamid /London: Constable, 1917/, p. 240; Nalbandian, The Armenian Revolutionary Movement, p. 125.

թյան ստեղծման գաղափարը՝ որպես ժամանակակից միջոց Եվրոպայում աճող ազգայնականության եւ հակասեմականության դարաշրջանում ապրող հրեաների խնդրի լուծման համար: Ընդհակառակը՝ նա միշտ գտնում էր, որ հրեաների ձուլումը նույնքան ցանկալի է, որքան եւ՝ անխուսափելի[14]: Բայց 35 տարեկան հասակում, նա թռիչք կատարեց լրագրության եւ գրականության աշխարհից դեպի քաղաքականություն ու դիվանագիտություն, եւ, որ ավելի արմատական է՝ ձուլման գաղափարից դեպի սիոնականություն: Այնքան էլ հեշտ չէ բացատրել մտայնության նման կտրուկ փոփոխությունները, որոնց պատճառները մնում են հանելուկային[15]:

Կարելի է որոշակիորեն ասել, որ դրանում իրենց դերն են խաղացել Փարիզում Դրեյֆուսի գործից նրա անմիջական տպավորությունները՝ հակասեմականության անսպասելի կատաղի ցույց եւ այդ ամենից առաջացած՝ վիրավորված հպարտության զգացում: Սա ընդհանուր բացատրությունն է: Բայց կան նաեւ այլ բացատրություններ: Պիտեր Լովենբերգն իր հակասություններով

[14] Alex Bein, Theodor Herzl: A Biography /Philadelphia: Jewish Publication Society of America, 1941/, pp. 94-95, 100-101.

Հանդես գալով որպես գրական քննադատ, նա մի անգամ կատակել է Ա. Դյումայի «Քամելիազարդ տիկինը» պիեսի սիոնամետ գաղափարների կապակցությամբ: Ավելին, Հերցլն այնքան հեռու էր գնացել, որ առաջարկել է հրեաների զանգվածային քրիստոնեացումը, որպես հրեական հարցի ամենաճիշտ լուծում:

[15] Այս կապակցությամբ ինքը՝ Հերցլը, իր «Օրագրերում» շեշտում է «անգիտակցական ոլորտը». The Complete Diaries of Theodor Herzl, edited by R. Patai /New York: Herzl Press, 1960/, vol. 1, p. 13, hereafter referred to as C. D.

լեցուն հոգեվերլուծական հետազոտության մեջ, Հերցլի մասին գրում է.

«Սիոնական վարքագրությունը Թ. Հերցլի անցումը դեպի հրեական ազգայնականություն կցանկանար բացատրել Դրեյֆուսի գործին Փարիզում թղթակցի կարգավիճակով հետեւելու նրա անմիջական դիտարկմամբ: Ենթադրում եմ, որ Հերցլի կոչը դեպի սիոնականություն բացատրվում է նրա առաքյալ, փրկիչ եւ քաղաքական առաջնորդ լինելու անձնական պահանջով»[16]:

Իսկ վերջերս Դեսմոնդ Ստյուարտի գրած Հերցլի ինքնակենսագրականում, համընդհանուր բացատրությանն ավելացավ մի նոր գործոն: Հարուստ աներոջ մահը Հերցլին հնարավորություն տվեց իր նոր ընտրությունը կենտրոնացնել քաղաքականության վրա. նա այդպես էլ չկարողացավ իրեն դրսեւորել գրական ասպարեզում: Հնարավորություն էր ընձեռնվել, օգտագործելով կնոջ փողերը, կյանքում նոր առաջխաղացման համար[17]:

«Օրագրային» ծանոթագրություններում՝ թվագրված 20 հոկտեմբերի 1895թ., Հերցլը հայտարարել է. «Ես հրեական Պարնելը կլինեմ»[18]: Նրա կյանքում, ինչպես նաեւ բոլոր հրեաների ժամանակակից պատմության մեջ բեկումնային այդ տարում, նա իր հետեւանքներով հույժ կարեւոր ուղու վրա կանգնեց, որը նրան բերեց Եվրոպայի իշխանությունների կենտրոն՝ փնտրելու միջազ-

[16] Peter Lowenberg, <Theodor Herzl: A Psychoanalytical Study in Charismatic Political Leadership>, in B. B. Wolman, The Psychoanalytical Interpretation of History /New York: Basic Books, 1971/, p. 151.

[17] Desmond Stewart, Theodor Herzl, p. 168.

[18] C. D. I, p. 248. Չարլզ Պարնելը (1846-1891) եղել է իռլանդացի առաջադեմ քաղաքական գործիչ, որը պայքարել է Իռլանդիայի անկախության համար:

գային հաստատման արժանացած ներգաղթի եւ գաղութացման «Խարտիան», որը, ինչպես նա էր զգում, անհրաժեշտ պայման էր հրեական օջախի հիմնադրման համար:

1895-ի ողջ հունիս ամսվա ընթացքում Հերցլը ապարդյուն փորձում էր իր քաղաքական լուծումների համար աջակցություն գտնել եվրոպական կեղծ մարդասեր բարոն Մորիս դե Գիրշի մոտ: Նա նաեւ նամակ է գրում պաշտոնաթող «Երկաթե կանցլեր» Բիսմարկին, որին նա պարզապես պաշտում էր, փորձելով պարզել, թե իր ծրագիրը «իրո՞ք փրկարար գաղափար է, թե՞ մաքուր երեւակայություն»[19]: Նամակն անպատասխան է մնում: Այդ ընթացքում նա գրեց մի ընդարձակ շարադրանք՝ «Դիմում Ռոտշիլդներին» վերնագրով, որը հետագայում էսքիզի դեր խաղաց նրա կենսաառաջխաղացման քաղաքական հիմնական աշխատության՝ «Հրեական պետության» համար:

Ֆրանսիայի հրեա կրոնավորներին եւ քաղաքական գործիչներին իր նախագծի կողմը գրավելու նպատակամիտված, 1895թ. նոյեմբերին իր Փարիզ այցելությունը նույնպես ոչ մի արդյունք չտվեց: Սակայն, ամենայն հավանականությամբ, հենց այդտեղ նա գտավ իր առաջին համախոհին՝ Մաքս Նորդաուին, որը նրան խորհուրդ տվեց գործել Անգլիայում, եւ, մասնավորապես, Լոնդոնում մեծ ազդեցություն վայելող հրեական Մակաբեյական ակումբում[2], որպես առավել բեղմնավոր բեմահարթակ քաղաքական ճիգերի համար: Նորդաուն ընդգծեց հրեական առաջնորդների եւ հատկապես

[19] C. D. I, p. 120, Letter to Bismark, June 19, 1895.

[2] *Ակումբը կոչվել է մ. թ. 2-րդ դարում Պաղեստինում հռոմեական իշխանության դեմ հրեական ապստամբության ղեկավար Մակաբեյ եղբայրներ-ի անունով:*

հրեական ազդեցիկ մամուլի հետ անմիջական շփման առավելությունները. Հերցլը դա պատշաճ կերպով արձանագրեց իր «Օրագրերում» (19 նոյեմբերի). «Ընկերակցության ծգողության կենտրոնը տեղափոխվում է Լոնդոն»[20]:

Ընդունելությունը Լոնդոնում ավելի ջերմ էր, քան Փարիզում: Բուռն հաջողություն վայելող գրականագետ Իսրայել Զանգվիլը կազմակերպեց նրա ներկայացումը բրիտանական հրեությանը: Պառլամենտի անդամ սըր Սեմյուել Մոնտեֆյուն նրան հաղորդեց, որ մեծ բավականությամբ բնակություն կհաստատի Պաղեստինում: Հերցլը նշեց. «Նա առաջարկում է նույնիսկ ավելի մեծ Պաղեստինի հիմնադրում, քան նախկինը»[21]: Մակաբեյական ակումբի անդամների համար նրա կարդացած դասախոսությունը լավ ընդունվեց, իսկ ինքը միաձայն ընտրվեց պատվավոր անդամ: Ավելին, լոնդոնյան «Ջյուիշ Քրոնիքլ» թերթը տպագրեց նրա «Հրեական հարցի լուծումը» հոդվածը, որն իր վրա միջազգային որոշ ուշադրություն հրավիրեց: Ճամփորդությունը Անգլիա ամբողջությամբ հաջող էր. այնտեղ նրա հաստատած կապերը հետագայում մեծ օգուտ կտան նրան՝ հայկական առաքելության կապակցությամբ:

Շուտով դրանից հետո՝ 1896թ. փետրվարին, Վիեննայում լույս տեսավ նրա գիրքը՝ «Հրեական պետությունը», եւ իրադարձություններն սկսեցին զարգանալ արագորեն: Գրքի վաճառքի դուրս գալուց մեկ շաբաթ անց՝ Հերցլի «Օրագրերում» հայտնվեց Նելլինսկու անունը.

[20] Ibid., pp. 272, 276.

[21] Ibid., p. 280.

«Դոկտոր Լանդան (լրագրող) առաջարկեց ինձ կազմակերպել շաբաթաթերթի հրատարակություն՝ շարժումը քարոզելու նպատակով: Դա ինձ հարմար է, ու ես կվերանայեմ այդ հարցը: Այդ շաբաթաթերթը իմ խոսնակը կդառնա: Լանդան ունի նաեւ մի ուրիշ լավ գաղափար: Նելլինսկին՝ «Correspondence de l'Est»-ի հրատարակիչը, սուլթանին բարեկամն է: Նա կարող է մեզ համար անկախության կարգավիճակ ապահովել՝ բախշիշի[3] դիմաց[22]:

Օգնության լրացուցիչ առաջարկություններ է ներկայացրել Նորին Մեծապատվություն, Վիլյամ Հ. Հեչլերը. նա Վիեննայի բրիտանական դեսպանատան կապելլանն էր, նաեւ սիրող-գուշակ: Նա այցելեց Թեոդոր Հերցլին՝ գտնվելով «ուժեղ հուզմունքի մեջ (նրա) լուծումից եւ առաջարկեց իրեն որպես «հրեական պետության» քարոզիչ մի շարք գերմանական արքայազների մոտ եւ խոստացավ կազմակերպել հանդիպում Եվրոպայի ամենահզոր կառավարիչներից մեկի՝ Վիլհելմ 2-րդ կայսրի հետ[23]: Ունկնդրության ժամանակ Հերցլը պետք է խնդրեր կայսրին՝ համոզել սուլթանին,

[3] *Դրամական վարձատրություն ծառայության համար, կաշառք:*

[22] Ibid., p. 305. Ֆիլիպ Միքայել դը Նելլինսկի (1841-1899).- «Բազմակողմանի գործակալ» (աշխատել է մի քանի եվրոպական պետությունների, օսմանյան սուլթանի եւ Թեոդոր Հերցլի համար), լեհ ազնվական, միջազգային դիվանագիտության արկածախնդիր եւ լրագրող, որին Հերցլը բնութագրեց որպես «ամենահետաքրքիր անձնավորություն, որի հետ ես գործ եմ ունեցել մինչեւ այսօր, երբ զբաղվել եմ հրեաների գործերով». C. D. I, p. 390. Նրա ներդրումը վաղ սիոնականության դիվանագիտության մեջ ուսումնասիրվել է հետեւյալ աշխատության մեջ. N. M. Gelber, <Philip Michael de Newlinsky: Herzl's Diplomatic Agent> in R. Patai, ed., Herzl Yearbook: Essays in Zionist History and Thought, vol. 11 /1959/, pp. 113-152.

[23] Ibid., p. 31.

որ նա սիոնական «Խարտիան» ընդուներ ռոդեզիական մոդելի նման, որը հրեաներին հնարավորություն կտար բնակվել Պաղեստինում եւ զբաղվել տնտեսական գործունեությամբ: Ձգողության կենտրոնը աստիճանաբար տեղափոխվում է արեւելք՝ Կ. Պոլսի կողմը: 1896թ. մայիսի 3-ին Դիոնիս Ռոզենֆելդը՝ Պոլսի «Օսմանիշե պոստ»-ի խմբագիրը, Բուդապեշտում այցելեց Հերցլին եւ իր ծառայություններն առաջարկեց որպես միջնորդ նրա եւ սուլթանի միջեւ: Նա համոզված էր, որ սիոնական նախագծի իրականացման ժամանակը հասել է, քանի որ Թուրքիան գտնվում էր ֆինանսական դժվար վիճակում, եւ խոստացավ ունկնդրություն կազմակերպել Յըլդըզ պալատում, մայիսի վերջին[24]:

Հաջորդ այցելուն, ըստ ցուցակի, հայտնվում է չորս օր հետո: Դա Ֆիլիպ Միքայել դը Նելլինսկին էր՝ լեհ քաղաքական արկածախնդիրը, որն ինքն իրեն բնութագրելով՝ մի անգամ ասել է. «Քանի որ ես չեմ կարող որոշակիացնել իմ ազգի քաղաքականությունը, ուրեմն ես թքած ունեմ ամեն ինչի վրա: Քաղաքականության մեջ ես վիրտուոզ դաշնակահար եմ՝ դերասանական շրջագայության մեջ, ահա՛ բոլորը»[25]: Ընդարձակ գրառումը Հերցլի օրագրում, որը նկարագրում է նրանց առաջին հանդիպումը, բնութագրական է, համապարփակ եւ մեկնաբանությունների կարիք չի զգում:

«Մայիսի յոթի երեկոյան, իմ հեռախոսազանգից հետո, Նելլինսկին ինձ մոտ եկավ: Կարճ ասած՝ ես նրան ծանոթացրեցի գործին: Նա ինձ ասաց, որ կարդացել է իմ գրքույկը մինչեւ վերջին անգամ Կ. Պոլիս մեկնելը ու այն քննարկել է սուլթանի հետ: Սուլթանը հայ-

[24] Ibid., p. 345.

[25] Ibid., p. 390.

տարարել է, որ երբեք չի բաժանվի Երուսաղեմից: Օմարի մզկիթը[4] պետք է ընդմիշտ մնա իսլամի տիրապետության տակ:

«Մենք կարող ենք հաղթահարել այդ դժվարությունը,- ասացի ես,- մենք կ'արտերկրայնացնենք Երուսաղեմը, որը դրանից հետո չի պատկանի ոչ մեկին, եւ, միեւնույն ժամանակ, կպատկանի բոլորին, կդառնա սրբավայր, բոլոր հավատացյալների ընդհանուր սեփականություն, մշակույթի եւ բարոյականության մեծ համատիրություն»:

Նելլինսկին կարծում է, որ սուլթանը ավելի շուտ մեզ կտա Անատոլիան: Փողը սուլթանի համար ոչինչ չի նշանակում. նա միանգամայն անտեղյակ է դրանց արժեքից, մի բան, որ յուրահատուկ է տիրակալներին: Բայց կա սուլթանին համոզելու ուրիշ միջոց՝ հայկական գործում նրան աջակցություն ցույց տալը:

Այժմ էլ սուլթանի կողմից Նելլինսկու վրա դրված է գաղտնի խնդիր Բրյուսելի, Փարիզի եւ Լոնդոնի հայկական կոմիտեների վերաբերյալ: Նա պետք է նրանց համոզի՝ ենթարկվել սուլթանին, որից հետո վերջինս, «սեփական կամքով», նրանց կշնորհի բարեփոխումներ, որոնք նա հրաժարվում է կատարել մեծ տերությունների ճնշման տակ: Այժմ Նելլինսկին ինձ խնդրում է Հայկական հարցում իր համար աջակցություն ապահովել, փոխարենը նա սուլթանին կասի, որ այդ ծառայության համար ինքը պարտական է հրեական ազդեցությանը: Սուլթանը դա ըստ արժանվույն կգնահատի: Այդ գաղափարը ինձ միանգամից ապշեցրեց իր գերազանցությամբ, սակայն ես նրան ասացի, որ մենք մեր օգնությունը

[4] *Երուսաղեմում Օմար խալիֆայի կառուցած մզկիթը կամ ժայռի գմբեթը համարվում է իսլամների երրորդ սրբությունը Մեքքայից ու Մեդինայից հետո:*

հենց այնպես չենք տա, այսինքն՝ կօգնենք միայն ի պատասխան հրեական գործին ցույց տրվելիք դրական ծառայությունների:

Այդ դեպքում Նելլինսկին առաջարկեց, որ անհրաժեշտ է ընդամենը հասնել հայերի կողմից զինադադարի: Հայկական կոմիտեները պատրաստվում են իրենց հարվածը հասցնել հուլիսին: Նրանց պետք է համոզել, որ մեկ ամիս սպասեն: Մենք այդ ժամանակահատվածը կօգտագործենք սուլթանի հետ բանակցելու համար: Քանի որ ինքը՝ Նելլինսկին, դառնում է հրեաների գործում շահագրգիռ կողմ, ուստի նա ցանկանում է այդ հայկական գործը գլուխ բերել օգուտով, այնպես, որ մեկը նպաստի մյուսին:

Ասացի. «Հրեական գործը Ձեզ կտա ավելի մեծ վարձ, քան հայկականը: Ես հեռու եմ փողային հարցերից, դա ճիշտ է, բայց ես ձեզ կտամ հանձնարարականներ՝ մեր հարուստներին դիմելու համար...»[26]:

Հիացած լինելով Նելլինսկու գաղափարով՝ կողմնակի մոտեցում ցուցաբերել Յելդզի արքունիքի քաղաքականության նկատմամբ, Հերցլը երկար ժամանակ չկորցրեց հավաքագրելու համար իր ունեցած կապերը մամուլում եւ քաղաքական աշխարհում, որպեսզի հայ հեղափոխական կոմիտեներին համոզի ընդունել սուլթանի պայմանները: Նա փորձեց նախագծի կատարման մեջ ներգրավել նաեւ Մաքս Նորդաուին, սակայն վերջինիս հեռագրային պատասխանը բաղկացած էր մեկ արտահայտիչ բառից՝ «Ոչ»[27]: Հերցլը սուլթանի հավատարմագրված գործակալի առաքելությունը քննարկեց նորին մեծապատվու-

[26] Ibid., pp. 345-346.

[27] Ibid., p. 349.

թյուն Հեչլերի հետ, ենթադրելով, որ նա ամեն ինչի մասին կտեղեկացնի իր ընկերոջը՝ դեսպան սըր Էդմունդ Մենսոնին: Վերջինս հետագայում գործին կբեւեռի լորդ Սոլսբերիի ուշադրությունը՝ մատնանշելով «հսկայական եւ ճիգեր չպահանջող դիվանագիտական հաջողության»[28] նվաճման հնարավորությունը՝ հայերի՝ Բ. Դռան հետ հաշտության կազմակերպման ուղիով: Այնուհետեւ Հերցլը որոշեց Նելիինսկուն ուղարկել Լոնդոն, իսկ ինքը մնաց Վիեննայում՝ գործողությունը ղեկավարելու համար:

ԴԻՐՔԵՐԻ ՁՈՒԳԱԿՑՎԱԾ ՇՈՇԱՓՈՒՄ ԼՈՆԴՈՆԻՑ (ՆԵՎԼԻՆՍԿԻ) ԵՎ ՎԻԵՆՆԱՅԻՑ (ՀԵՐՑԼ)

Տենդագին միջնորդական գործունեություն զարգացնելով՝ Հերցլը նախապես ստացավ աջակցությունը «Հրեական պետության» ռուսերեն թարգմանության հեղինակի՝ հրեա լրագրող եւ նախկին նիհիլիստ Ս. Կլյաչկոյի, որը ծանոթ էր թիֆլիսյան կոմիտեի ղեկավար Ալավերդովի (Ալավերդյան) հետ, եւ որը կարող էր կապ հաստատել Լոնդոնի հայ հեղափոխականների հետ: Կլյաչկոյին առաջարկվեց գրել նրանց՝ հատուկ ընդգծելով, որ Հերցլը սուլթանի առաջարկը անկեղծ է համարում եւ թե նրա անձնական դեսպանորդին կարելի է վստահել[29]:

Վիեննայից մայիսի 15-ին Հերցլը գրեց Լոնդոն՝ Նելիինսկուն եւ նրան տեղեկացրեց, թե լորդ Սոլսբերիի նկատմամբ հողը նախապատրաստված է, եւ թե ընկերները կապեր են հաստատում հայ առաջնորդների հետ Լոնդոնում եւ Թիֆլիսում: Նա նաեւ տվեց հետեւյալ խորհուրդը. «Դուք պետք է հայերի անվստահությունը հաղթահարեք: Նրանց առաջնորդները կհամոզվեն, որ մենք ուզում ենք նրանց վարկաբեկել անպտուղ հնազանդությամբ, ինչը ողջ շարժմանը վնաս կպատճառի: Իրականում, հենվելով անցած գիշեր ստացված տեղեկատվության վրա, մենք նրանց կողմից կարող էինք հասնել հաշտության կնքման, առանց որեւէ կործանարար արդյունքների»[30]:

Սոսկ միայն «Օրագրերի» հիման վրա դժվար է որոշել Հերցլի ու Նելիինսկու հեղինակավորության աստիճանը 1896թ. հայ հեղափոխական շարժման դրության վերաբերյալ կամ նրանց միջնորդության յուրահատուկ մանրամասները վերականգնել: Այդ առումով մեծ օգնություն ցույց չի տալիս նաեւ Ն. Մ. Ժիլբերի «Ֆիլիպ Մ. դը Նելիինսկի» աշխատությունը, չնայած որ այնտեղ օգտագործվել են Հերցլի չհրապարակված փաստաթղթերը[31]: Իրոք, Ժիլբերը համեմատաբար քիչ ուշադրություն է հատկացնում Հերցլ-Նելիինսկի կապերում հայկական կարեւոր հանգամանքի վրա: Իսկ երբ նա դա անում է, ապա հիմնականում հենվում է ավելի շատ «Օրագրերի», քան թե չհրապարակված դիվանական նյութերի վրա: Սակայն նա վկայակոչում է երեք հանգամանք, որոնք կարող են օգնել լույս սփռելու վերը նշված հարցերի վրա:

Ըստ Ժիլբերի, Նելիինսկին Հերցլին ծանոթացրեց «Լոնդոնի եւ Փարիզի հայկական կազմակերպությունների դրության հետ»: Ժիլբերը վկայակոչում է երկու նամակ՝ գրված 1896թ. մայիսի 8-ին եւ 9-ին,

[28] Ibid., p. 348.

[29] Ibid., pp. 349-350.

[30] Ibid., p. 351.

[31] M. M. Gelber, <Philip Michael de Newlinsky: Herzl's Diplomatic Agent>, Herzl Yearbook, II, /1959/, pp. 113-152.

որոնք գտնվում են Սիոնական կենտրոնական դիվանում՝ Երուսաղեմում[32]: Նա գրում է նաեւ. «Նելլինսկին ապարդյուն փորձեց Սիդնեյ Վայթմենի օգնությամբ համոզել Մայերին, որը Ռոթշիլդի alterego-ն[5] էր: Մայերն ուղղակի ասաց նրան, որ ինքը հայկական մտահղացումը անհույս է գտնում»[33]: Ամենայն հավանականությամբ, այդ Մայերը սըր Կարլ Մեյերն էր՝ ֆինանսական հարցերով հրեա առաջատար փորձագետը եւ Ռոթշիլդի գրասենյակի ղեկավարը: Հետաքրքիր կլիներ իմանալ. բացատրե՞լ է արդյոք Մեյերը Նելլինսկուն հայկական մտահղացման վերաբերյալ իր գնահատականի պատճառները, եւ լեհ արկածախնդիրն, իր հերթին, ուղարկե՞լ է արդյոք այդ տեղեկատվությունը Հերցլին:

Մյուս կողմից, Իոսիֆ Ֆրենկելի «Լյուսյեն Վոլֆ եւ Թեոդոր Հերցլ» աշխատության մեջ Հերցլի դիվանից մի շարք փաստաթղթերի մեջբերումներ են արվում, որոնք անմիջականորեն կապված են հայկական առաքելության հետ. Լյուսյեն Վոլֆին Նելլինսկու մայիսի 27-ի նամակի ամբողջական շարադրանքը եւ նշանակալի քաղվածքներ Հերցլի՝ Լոնդոնի Մակաբեյական ակումբի նախագահ Սողոմոն Ժ. Սողոմոնին ուղղած մայիսի 22-ի անկեղծ նամակից[34]:

«Օրագրերի» գրառումներն ու Ժիլբերի եւ Ֆրենկելի աշխատությունների պարունակած դիվանական նյութերը տալիս են ողջ

[32] Ibid., p. 125 quoting Gebeimarchiv Herzl fasz H. 613 a.

[5] *Ընթերակա:*

[33] Ibid., p. 126.

[34] Joseph Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl /London: Jewish Historical Society, 1960/, pp. 9-10.

պատկերի հստակ ուրվագծերը, չնայած որ շատ վճռական հարցեր էլ անպատասխան են մնում:

Վերադառնալով Լոնդոնում ձեռնարկված նախաձեռնություններին, հարկ է ասել, որ ինչպես ցույց տվեցին շտապ հաղորդագրությունները, չնայած Հերցլի գործադրած ողջ ջանքերին, սուլթանի հավատարմագրված գործակալը հասել էր աննշան հաջողությունների: Նա հատկապես ցանկանում էր ընդունվել լորդ Սոլսբերիի կողմից եւ մտնել բրիտանական մամուլի ազդեցիկ ոլորտները, որոնք ավանդորեն թշնամաբար էին տրամադրված Աբդուլ Համիդի դեմ: Նելլինսկին հեռագրեց Հերցլին՝ աջակցություն ցույց տալ «Իոսիֆ Մոզես Լեւիի որդուն՝ «Դեյլի Թելեգրաֆ»-ից սըր Էդվարդ Լոուսոնին ներկայացնելու մեջ»:[35] Նա փորձում է նաեւ իր կողմը ներգրավել Բրենտինգին՝ ազդեցիկ «Քոնթեմփորարի ռեվյու»-ի խմբագրին[36]: Որպես պատասխան, Հերցլը հանձնարարական նամակ ուղարկեց բրիտանական առաջատար լրագրող Լյուսյեն Վոլֆին՝ օգնություն խնդրելով բրիտանական մամուլի առնչությամբ: «Նա չէր կարող ավելի կարեւոր պաշտոն զբաղեցնող մի անձնավորություն գտնել»:[37]

Լ. Վոլֆը, չնայած սիոնականության նկատմամբ իր ընդդիմադիր դիրքին (նա «Սիոնիստական սպառնալիք» վերնագրով հոդված էր հրատարակել), աշխատանքի մեջ ներգրավվեց Հերցլի առաջարկությամբ եւ օգնություն ցուցաբերեց Հերցլին ու Նելլինսկուն՝ հայկական առաքելության եւ սուլթանի հետ բանակցությունն-

[35] Ibid., p. 9.

[36] Gelber, <Philip Michael de Newlinsky>, p. 126.

[37] C. D. I, p. 355; Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl, p. 9.

ների հարցերում: Լ. Վոլֆին գրած նամակում ահա թե ինչպես է բնութագրում Նելլինսկին իր գաղտնի առաքելությունը.

«Նպատակը հայկական կոմիտեներին համոզելն է ուղղակի բանակցությունների մեջ մտնել սուլթանին հետ, որը ամենալավ մտադրություններով է ղեկավարվում: Կարող է անկեղծ եւ լիակատար հաշտություն ձեռք բերվել: Հայերն, ի հարկե, պետք է հաշվի առնեն այն դժվար կացությունը, որի մեջ գտնվում է սուլթանը: Դա նրան հնարավորություն կտա հայերին տալ ավելին, քան ինչ-որ մի ժամանակ հնարավոր կլինի ձեռք բերել ռազմա-ծովային ցույցի միջոցով: Հիմնական խնդիրը, ինչպես դուք գիտեք, անձամբ սուլթանին հետ ըմբռնումի հաստատումն է, առանց նրա նախարարների կամ արտասահմանյան դիվանագետների միջամտության, որն անցյալում ամեն ինչ փչացրեց...»[38]:

Նելլինսկին շարունակում է փորձերը ներկայացման հասնելու «Դեյլի թելեգրաֆ»-ից սըր Լոուսոնի մոտ, «որի կարեւոր դիրքը մեզ լավ հայտնի է, որի թե՛ բարի կամքը եւ թե՛ աջակցությունը մեզ համար մեծ նշանակություն կունենան»[39]:

Սողոմոն Ժ. Սողոմոնին սիոնական առաջնորդի 1896թ. մայիսի 22-ի նամակը, սակայն, ավելի բնորոշ է հետեւյալ իմաստներով.

ա) Սուլթանի հայկական նախաձեռնության վերաբերյալ բրիտանական մամուլի աջակցության ձեռք բերման կարեւորությունը (փակագծերում կարելի է ավելացնել՝ հրեա ազդեցիկ լրագրողների օգնությամբ):

[38] Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl, p. 9.

[39] Ibid.

բ) Հերցլի՝ հայ առաջնորդներին ուղղված առաջարկների վերին աստիճանի հակասական (խորամանկության հասնող) բնույթը: Նամակը, որոշ կրճատումներով, մեջբերվել է Ֆրենկելի կողմից, եւ բաց թողնված տեղերը կարող են հույժ կարեւոր նշանակություն ունենալ:

«Խնդրում եմ ձեզ բանակցել պարոն Լյուսյեն Վոլֆի հետ եւ նրան հարցնել՝ ինչո՞վ կարող են մեզ օգնել մեր բարեփոխումները այդ հարցում: Հայերը պետք չէ իմանան, որ մեր մասնակցությունը պայմանավորված է մեր ազգային շահերով: Այն դեպքում, եթե ուղղակի միջամտությունն անհնար լինի, հնարավո՞ր չի լինի, արդյոք, հօգուտ հայերի հնազանդության գաղափարի մթնոլորտ ստեղծել բրիտանական մամուլում: Պարոն Լյուսյեն Վոլֆին դժվար չի լինի հասկանալ այս գործողության ողջ կարեւորությունը, եւ հույս ունեմ, որ նա կարող է մեզ օգնել այնքանով, որքանով որ դա հնարավոր է: Մեր նպատակն է պայքարը հուլիսին վերսկսել մտադրած հայկական կոմիտեներին համոզել՝ մինչեւ օգոստոս հաշտություն կնքել: Ասում եմ հաշտություն եւ ոչ թե՝ խաղաղություն, քանի որ այդ ընթացքում մենք կարող ենք գործարք կնքել սուլթանի հետ եւ մեզ համար որոշ զիջումներ ստանալ: Կարելի՞ է ասել, որ ես կարող եմ հույս դնել Ձեր, պարոն Վոլֆի եւ Լոնդոնի մեր բարեկամների վրա: Մենք պետք է գործենք անհապաղ...»[40]

Նելլինսկու եւ Հերցլի առաքելությունը, ծայրահեղ դեպքում, միայն մի կապակցությամբ է հաջողված. բրիտանական մամուլում հայտնվեց որոշ տեղեկատվություն սուլթանի՝ բարեփոխումներ անցկացնելու առաջարկի վերաբերյալ՝ ի պատասխան հնազան-

[40] Ibid.

դության: «Օբսերվեր» թերթի 1896թ. հունիսի 7-ի համարում հրատարակվեց «Սուլթանը եւ հայերը. ճշմարտությունը գաղտնի առաքելության մասին» խորագրով հոդվածը: Դրանում հայ առաջնորդները նախազգուշացվում են, որ իրենք իրենց թույլ չտան ներգրավվել կեղծ դրության մեջ՝ կուրորեն անսալով երիտթուրքերի կրքոտ խորհուրդներին[41]: Լ. Վոլֆն իր լուման ներդրել է չստորագրված հոդվածի ձեւով, որն արձագանգ է գտել բրիտանացի հայի՝ Ջեյմս Արաթուն Մալքոլմի[6] Հայկական հայրենասիրական միության նախկին դիվանապահի մոտ, որը, ամենայն հավանականությամբ, սերտ կապեր չուներ այնպիսի ռազմա-հեղափոխական շրջանակների հետ, որպիսին էր Նազարբեկյանինը: Իսկապես, նրա պատասխանը ավելի հասկանալի է դառնում նրա սիոնամետ միտումների եւ Բալֆուրի[7] հայտարարության շուրջ տարվող բանակցությունների կապակցությամբ հետագայում Վայցմանին մատուցած օգտակար ծառայությունների լույսի ներքո[42]:

1896թ. հուլիսին հրապարակված նամակում, Մալքոլմը նշեց այն կարեւոր նշանակությունը, որ ապագա Հայաստանի համար կունենա ենթադրյալ հրեական պետության ստեղծումը: Նա նաեւ

[41] Ibid., p. 10.

[6] *Մելքոն-Մալքոլմը հայտնի մասոն էր:*

[7] *Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: 1917թ.-ին նա, իր կառավարության անունից հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, ըստ որի, բրիտանական կառավարությունը պարտավորություն էր ստանձնում աջակցել Պաղեստինում հրեական ազգային օջախի հիմնմանը:*

[42] Leonard Stein, The Balfour Declaration /London: Valentine, Mitchell, 1961/, pp. 354-355, 362-366.

Մալքոլմը գործարար էր, ծագումով՝ պարսկահայ:

հստակեցրեց հայկական բարեփոխումների վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի որոշումները չկատարելու պատճառները՝ առաջ քաշելով ենթադրություն, թե հրապուրիչ խայծի միջոցով սուլթանը մոլորության մեջ է գցել Դիզրայելիին.

«Ովքեր երկար տարիներ աշխատել են Հայաստանի համար եւ հնարավորություն են ունեցել իմանալ, թե ի՞նչ է կատարվել «վարագույրի հետեւում», նրանց շատ լավ հայտնի է, թե ինչն էր Բեռլինի պայմանագրի, այժմ տխրահռչակ 61-րդ հոդվածը չկատարելու իրական պատճառը: Կասկած չկա, որ այն ժամանակ, երբ ստորագրվել էր այդ միջազգային համաձայնագիրը, (Անգլիան)... ենթադրում էր, որ խոստացված բարեփոխումները ծայրահեղ դեպքում կառաջարկվեն հայկական նահանգների վարչությունների քննարկմանը...

Բայց թուրքը, դավադիր ինչպես միշտ, թեեւ թուլացած ու տապալված, ակնարկեց լորդ Բիկոնսֆիլդին (Դիզրայելի), որ հնարավոր է Պաղեստինում ստեղծել ինքնավար մարզ, եթե միայն սուլթանին ժամանակ տրվի այդ բարեսիրական գործողությունը կատարելու համար: Իսկ ո՞վ իրականում, նրա տեղը լինելով, այդպիսի խայծը չէր կտցի: Բարեփոխումների ներմուծումը համապատասխանաբար հետաձգվում է sine die...»[43]:

Մալքոմը շարունակեց պնդել, որ մի անգամ հաջողությամբ ժամանակ շահելով, Բ. Դուռը «նորից կփորձի հին խաղը խաղալ»: Հետո, որպես եզրափակում, նա ավելացնում է. «Գործերի ներկա դրության դեպքում առկա է այն հավանականությունը, որ հաջորդ

[43] Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl, p. 11, quoting Malcolm's letter published in <The Observer> /July 6, 1896/.

երեսուն կամ քառասուն հազար հայերի զոհաբերության արդյունքում, հրեաներին մի քիչ հող կշնորհվի Սիրիայում՝ բնակավայրեր ստեղծելու համար: Սակայն, եթե նրանք ուզում են իրականացնել իրենց օրինական ձգտումը՝ ստեղծել իսկական հրեական պետություն՝ ինքնավար Պաղեստին, ապա, իմ կարծիքով, ոչինչ դա այնպես չի արագացնի, ինչպես ինքնավար Հայաստանի ստեղծումը»[44]:

Չնայած, որ բրիտանական մամուլի «մշակման» գործընթացը տալիս էր որոշ արդյունքներ, սակայն վճռորոշ քաղաքական գործընթացը՝ հայկական առաքելության մեջ լորդ Սոլսբերիի միջնորդության ապահովման կապակցությամբ, փակուղի էր մտնում: Մայիսի 26-ին, երբ Նելլինսկին հեռագրեց, թե Սոլսբերին մերժել է իր հետ հանդիպել, Հերցլը խորհուրդ տվեց նրան՝ վերադառնալ Վիեննա ու հետաձգել բրիտանական պետական գործչի վերաբերյալ նախաձեռնությունը մինչեւ սիոնական առաջնորդի նախատեսված այցը Լոնդոն՝ հունիսի վերջին: Փոխարենը, նա առաջարկեց անհապաղ մեկնել Կ. Պոլիս, ուր Նելլինսկին իրեն կներկայացնի Աբդուլ Համիդին: «Թող սուլթանը մեզ տա այդ հողակտորը,- ասաց նա,- իսկ մենք դրա համար նրա տունը կարգի կբերենք, կուղղենք նրա ֆինանսական դրությունը եւ նրա օգտին կտրամադրենք հասարակական կարծիքը ողջ աշխարհում»[45]:

Ալավերդյանի եւ Կլյաչկոյի կողմից Լոնդոնում հայկական կոմիտեների մտադրությունների շոշափումը նույնպես որեւէ որոշակի արդյունք չտվեց: Նազարբեկյանն իր պատասխանում ընդգծեց իր

[44] Ibid.

[45] C. D. I, pp. 356, 363.

անվստահությունը օսմանյան սուլթանի հանդեպ, սակայն շնորհակալություն հայտնեց «հրեական շարժման առաջնորդին՝ նրա բարի զգացմունքների համար»[46]:

Պարզ էր, որ միայն Նելլինսկու հետ Կ. Պոլիս արտահերթ ուղեւորությունը եւ սուլթանին մոտ ընդունելությունը կարող էին փրկել դրությունը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ. 1896Թ. ՀՈՒՆԻՍ

Հունիսի 15-ին Վիեննայից Կ. Պոլիս ուղեւորված Արեւելյան ճեպընթացն իր հետ տանում էր Թ. Հերցլին: Բուդապեշտում նրան միացավ Նելլինսկին եւ նրան ներկայացրեց թուրք երեք բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք իրենց կայսրության մայրաքաղաքն էին գնում: Հերցլը տանում էր Պաղեստինի գնման իր գլխավոր նախագիծը: Նելլինսկու առաջարկով՝ նա տանում էր նաեւ մի զամբյուղ «մորիով, դեղձով, խաղողով եւ ծնեբեկով. այս ամենը ներմուծված էր Ֆրանսիայից»[47]: Մրգերը նախատեսված էին թուրքական արքունիքի համար: Գլխավոր ծրագիրը նախատեսված էր Աբդուլ Համիդի համար, եւ Հերցլը հույս ուներ, որ սուլթանը դրան հավանություն կտա:

Վագոն-ռեստորանում Հերցլը քննարկեց ծրագիրը սուլթանի հավատարմատար գործակալի հետ, որն արդեն երեւի թե սիոնական շարժման առաջին գործընկերն էր դարձել: «20 միլիոն ֆունտ,

[46] Ibid., p. 359.

[47] Ibid., p. 366.

որոնցից 2 միլիոնը կհատկացվի որպես անհապաղ կանխավճար Պաղեստինի զիջման համար, իսկ 18 միլիոնը՝ (Պարտքային) Ստուգող հանձնաժողովից թուրքական կառավարության ազատագրման համար»: Նելլինսկին կրքոտ առարկեց ու առաջարկեց իր՝ երեք մասից բաղկացած հականախագիծը. «Մեկ երրորդը մենք վճարում ենք կանխիկ: Երկու երրորդի համար մենք մեր վրա պատասխանատվություն ենք վերցնում (կամ էլ՝ եթե մենք դառնանք ենթակա հանրապետություն, ապա այդ մեկ երրորդը կներկայացվի մեր տուրքի հաշվի մեջ): Մնացած երրորդի հաշվին մենք կվճարենք առանձնաշնորհումների հասույթներից տոկոսներ՝ ետ վերցված գործող (Ստուգող) հանձնաժողովից եւ մեզ հանձնված»: Նա ավելացրեց. «Հնարավոր է, որ մենք կարողանանք նախատեսել լրացուցիչ առանձնաշնորհումների,- օրինակ, ամբողջ Թուրքիայի համար էլեկտրաէներգիայի արտադրության մենաշնորհը եւ այլն,- ստացում, եւ դա կհեշտացնի մեր վճարումները»:

Հերցլի հակազդեցությունը, ըստ «Օրագրերի» գրառումների, հետեւյալն էր. «Այդ հարցի լուծումը հետաձգում եմ մինչեւ առավոտ եւ կարծում եմ, որ Նելլինսկին ճիշտ է»[48]:

Բայց նրան հիասթափություն էր սպասվում: Դեռ չէր հասցրել ժամանել Կ. Պոլիս, երբ Նելլինսկին հայտնեց նրան, որ սուլթանի առաջին քարտուղար Իզզետ բեյը, թշնամաբար է տրամադրված նախագծի հանդեպ: «Այս գործում չափազանց շատ միջնորդադրամ է խոստացվում,- ասաց նա»[49]: Առավել սպառնալից էր այն, որ, ըստ լուրերի, Աբդուլ Համիդը հիվանդ էր եւ չէր ընդունել Նելլինսկուն: Հերցլը մտածում էր, թե արդյո՞ք իր սպասվող ունկնդրությունը սպառնալիքի տակ է գտնվում: Այսպես թե այնպես, ընթրիքից հետո նա Նելլինսկու հետ ուղեւորվեց իտալական օպերետի ներկայացման, ուր հանդիպեց Մեծ վեզիրի որդու՝ Ջավադ բեյի հետ: Հերցլի օրագրի գրառումն ասում է. «Մենք նստեցինք այգու նստարանին. հեռվից, բեմահարթակի կողմից, լսվում էին օպերետի երաժշտության ձայները: Այդ ժամանակ ես դեռ երիտասարդությամբ լի պետական խորհրդատուին ծանոթացնում էի նախագծի հետ: Նրա առարկությունները հետեւյալն էին. Երուսաղեմ սրբավայրի կարգավիճակը,- ասաց նա,- որոշակիորեն պետք է մնա Թուրքիայի ղեկավարության տակ: Երուսաղեմի զիջումը կհարվածի ժողովրդի ամենանվիրական զգացմունքներին: Ես լայն արտերկրայնություն խոստացա: Քաղաքակիրթ աշխարհի սրբատեղիները պետք չէ պատկանեն ոչ ոքի, սակայն եւ պետք է պատկանեն յուրաքանչյուրին»[50]:

Հաջորդ օրը նա նախագիծը նկարագրեց Մեծ վեզիրին: «Պաղեստինը ընդարձակ է,- պատասխանեց վեզիրը,- նրա ո՞ր մասը դուք նկատի ունեք»: Հերցլը պատասխանեց. «Դա պետք է քննարկվի այն օգուտի տեսանկյունից, որը մենք առաջարկում ենք: Մեծ տարածքի համար մենք մեծ զոհաբերություններ կանենք»[51]: Իսկ երբ օսմանցի պաշտոնյան հետաքրքրվեց պայմանների մասին, Հերցլը զգուշորեն հասկացրեց, որ այդ տեղեկատվությունը նախատեսված է միայն սուլթանի համար, սակայն, եթե դրանք կընդունվեն սկզբունքորեն, ապա սըր Սեմուել Մոնտեգյուն քննարկման

[48] Ibid., p. 369.

[49] Ibid., pp. 370-371.

[50] Ibid., pp. 371-372.

[51] Ibid., pp. 378.

կներկայացնի սիոնական շարժման ֆինանսական ծրագիրը: Երեկոյան Նելլինսկին հյուրանոց վերադարձավ նորից վատ լուրերով եւ «իբրեւ սգո նշան՝ միայն կես շիշ շամպայն» պատվիրեց[52]: Աբդուլ Համիդ փադիշահը մերժեց նախագիծն ամբողջությամբ. «Եթե պարոն Հերցլը ձեզ համար այնպիսի ընկեր է, ինչպիսին դուք ինձ համար, ապա խորհուրդ տվեք նրան այլեւս այդ ուղղությամբ ոչ մի քայլ չկատարել: Ես չեմ կարող վաճառել հողի մի թիզ անգամ, քանի որ այն ինձ չի պատկանում, այլ՝ իմ ժողովրդին: Իմ ժողովուրդը ստեղծել է այս կայսրությունը՝ նրա համար մղված ճակատամարտերում չխնայելով իր կյանքը եւ որոշելով այն իր արյամբ: Եվ մենք նորից կողողենք մեր արյամբ, նախքան կթողնենք, որ այն մեր ձեռքից խլեն: Իմ երկու զորագնդերի մարտիկները՝ Սիրիայից եւ Պաղեստինից, Պլեւնայի[8] տակ մեկը մյուսի հետեւից սպանվեցին, եւ ոչ մեկը չնահանջեց, նրանք բոլորը իրենց կյանքը զոհեցին այդ կռվի դաշտում: Թուրքական կայսրությունը ինձ չի պատկանում, այլ՝ թուրք ժողովրդին: Ես չեմ կարող տալ նրա եւ ոչ մի մասը: Թող հրեաներն իրենց միլիարդներն իրենց պահեն: Երբ իմ կայսրությունը կբաժանվի մասերի, նրանք կարող են Պաղեստինը ձրի ստանալ: Սակայն կմասնատվի միայն մեր դիակը: Ես կենդանի հերձման չեմ համաձայնվի»:[53]

---

[52] Ibid.

[8] *Պլեւնա.- 1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմի հիմնական ճակատամարտերից մեկի վայրը Բուլղարիայի տարածքում, որտեղ Օսմանյան կայսրության բանակը կատաղի դիմադրություն ցույց տվեց առաջացող ռուսական զորքերին:*

[53] Ibid.

Հերցլը սակայն հույսը չկորցրեց: Նա ցանկանում էր, որպեսզի Նելլինսկին վերսկսի իր ջանքերը եւ հասնի ունկնդրության:

Հունիսի 21-ին Նելլինսկին գտավ սուլթանի՝ «Հրեական պետության» հեղինակի ընդունելության մերժման պատճառը: Սուլթանը դժգոհ էր վիեննական մի թերթից, որին աշխատակցում էր Հերցլը: Սակայն դեռ հույս կար: Ահա՛ թե ինչպես է նկարագրում այդ դրվագը Հերցլն իր «Օրագրերում». «(Աբդուլ Համիդը) չէր կարող եւ չի կարողանա ընդունել ինձ որպես լրագրողի՝ Բաչերի եւ «Նոյե ֆրայե պրես»-ի հետ ծանոթանալուց հետո: Բաչերի հետ նրանց հանդիպումից մի քանի ամիս անց, մեր թերթը նրա անձը այնպիսի կատաղի գրոհի ենթարկեց, ինչպիսին երբեւէ տեղ չի գտել մամուլում, ներառյալ անգլիականը եւ հայկականը:

Մյուս կողմից նա կարող էր եւ կարող է ինձ ընդունել որպես բարեկամի՝ իմ ծառայությունները նրան առաջարկելուց հետո: Ինձանից խնդրած ծառայությունները հետեւյալն են. առաջին, ես պետք է եվրոպական մամուլի վրա ազդեցություն գործեմ (Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում եւ Վիեննայում), որպեսզի Հայկական հարցը լուսաբանվի թուրքերի համար առավել բարյացակամ ոգով: Երկրորդ, պետք է ուղղակի համոզեմ հայ առաջնորդներին՝ ենթարկվել իրեն, որից հետո նա կանի բոլոր հնարավոր զիջումները...

Անմիջապես ասացի Նելլինսկուն, որ պատրաստ եմ ընկերակցելու իրեն: Թող նրանք ինձ տան գործնական պատկերացում հայկական իրադրության վերաբերյալ. Լոնդոնում ինչպիսի՞ մարդկանց վերահամոզել, ո՞ր թերթերի ղեկավարությանն է հարկավոր համոզել եւ այլն: Իհարկե, իմ ջանքերը բավականին կթեթեւանային, եթե սուլթանն ինձ ընդուներ: Նելլինսկին ասաց. «Նա ձեզ կընդունի ավելի ուշ եւ բարձր պարգեւ կշնորհի»: Պատասխանեցի.

«Պարգեւների կարիք չունեմ: Այն ամենը ինչ ուզում եմ հիմա՝ նրա հետ հանդիպելն է...»[54]:

Դա տեղի ունեցավ հունիսի 21-ին: Մեկ շաբաթ անց՝ Հերցլի մոտ նոր մտքեր առաջացան: Նա, «դժկամությամբ եւ հոգու խորքում ամաչելով», Նելլինսկուն ասաց. «Եթե սուլթանն ինձ չընդունի, ապա հարկ է, որ, ծայրահեղ դեպքում, նա ինձ որեւէ շոշափելի երաշխիք տա, թե լսելով ու մերժելով իմ առաջարկությունը, նա նախկինի պես սիրալիր հարաբերությունների մեջ կմնա ինձ հետ: Այս դեպքում՝ բարձր պարգեւը ընդունելի է: Սակայն, աղաչում եմ քեզ՝ ինձ պարգեւներ որսացող չհամարել: Երբեք չեմ սլացել պարգեւների հետեւից եւ հիմա էլ չեմ սլանում: Սակայն ինձ եւ Լոնդոնի իմ մարդկանց համար սուլթանի բարեհաճության նշանը շատ անհրաժեշտ է»[55]:

Եթե հավատարմատար-գործակալը չկարողացավ հանդիպումն ապահովել, ապա նա կարողացավ պարգեւը կազմակերպել: Օսմանյան մայրաքաղաքից նրանց մեկնումի նախօրեին, երբ նա վերադարձավ «Ռոյալ» հյուրանոց՝ իր ուղեբեռը հավաքելու, «Նելլինսկին, որը ներքնաշորերով էր եւ նամակ էր գրում... «Մեջիդիե» շքանշանի Հրամանատարական աստիճանի մի տուփ մեկնեց (Հերցլին)»[56]: Իսկ երբ «Արեւելյան ճեպընթացը» սլանում էր դեպի Սոֆիա, երկակի գործակալը վստահաբար ասաց. «Հայկական հարցում սուլթանը ձեզանից օգնություն է սպասում: Ավելին, նա ցանկանում է, որ դուք կազմակերպեք նրա համար փոխառություն, որն ապահովված լինի փարոսներից եկող հասույթներով: Այդ

[54] Ibid., pp. 386-387.

[55] Ibid., pp. 397-398.

[56] Ibid., p. 400.

նպատակով՝ նա ձեզ է ուղարկում Կոլլասի հետ պայմանագիրը: Հասույթը հավասար է տարեկան 45000 թուրքական լիրայի: Ենթադրվում է, որ փոխառության գումարը կհասնի մինչեւ 2 միլիոն ֆունտի»[57]:

Այժմ, արդեն երկու անգամ պարգեւատրված, Հերցլը պատրաստ էր լոնդոնյան բարեկամների հետ հանդիպմանը:

ԼՈՆԴՈՆ, 1896Թ. ՀՈՒԼԻՍ.
ՀԵՐՑԼԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ՀԵՏ

Հայկական հարցում սիոնական դիվանագիտության հաջորդ փուլը ամենամանրակրկիտ մոտեցում էր պահանջում: Խաղագումարները, դատելով ըստ Նելլինսկու, բարձր էին, եւ հաջողությունն ապահովված կլիներ 3 պայմանների կատարման դեպքում. «Եթե Ձեզ հաջողվի հնազանդեցնել հայերին, եւ եթե Դուք կարողանաք ձեռք բերել 2 միլիոն ֆունտ երաշխիքով (փարոսների), եւ եթե մեզ մոտ լինի Բիսմարկի նամակը, ապա ութ օրվա ընթացքում մենք կարող ենք կարգավորել բոլոր գործերը»[58]:

Հեռանկարը հուսադրող էր:

Առաջին հայացքից հեշտ գործ էր թվում 2 միլիոն գտնել համաշխարհային ֆինանսական կենտրոն Լոնդոնում: Ըստ սըր Սեմուել Մոնտեգյուի տվյալների, միայն Գիրշի ֆոնդն իր տրամադրության տակ 10 միլիոն ֆունտ ստեռլինգ ուներ[59]: Բրիտանական

[57] Ibid., pp. 401.

[58] Ibid., pp. 403-404.

[59] Stewart, Theodor Herzl, p. 246.

հրեությունը հարուստ էր եւ, ինչպես կարծում էր Հերցլը, անմիջապես կհետաքրքրվեր նրա պաղեստինյան նախագծով: Բացի այդ, նա շատ շահավետ, երկարատեւ ներդրումների հեռանկար էր առաջարկում. այդ փոխառությունը եւ դրա նմանները կապված կլինեն հասարակական օգտագործման ձեռնարկությունների կառուցման առանձնաշնորհումների հետ: Պայքարը Եվրոպայում այդպիսի առանձնաշնորհումների ստացման համար, ինչպես նա դա իմացավ Կ. Պոլիս վերջերս կատարած ուղեւորության ժամանակ, գտնվում էր ամենաեռուն շրջանում: Հայ հեղափոխական կոմիտեների, մասնավորապես Նազարբեկյանի եւ Հնչակյան կուսակցության համար Լոնդոնը նույնպես հենարան էր ծառայում: Ինչ վերաբերում էր Բիսմարկի հետ հանդիպմանը, ապա Նելլինսկին ասաց, որ ինքը կկազմակերպի ծանոթությունը երկաթե կանցլերի հետ մի ընդհանուր ընկերոջ՝ լրագրող, օսմանյան փադիշահի մոտ ծառայության մեջ գտնվող Սիդնեյ Վայթմանի միջոցով:

Հողը նախապատրաստելու համար՝ Հերցլը Վիեննայում հուլիսի 21-ին հանդիպեց հայ հեղափոխական առաջնորդ Ալավերդյանի հետ (հանդիպմանը որպես թարգմանիչ ներկա էր նաեւ Կլյաչկոն) ու իր ծառայություններն առաջարկեց հայերին սուլթանի հետ հաշտեցնելու գործում: Ալավերդյանը առանձնակի մտերմություն չցուցաբերեց: Հերցլը նկատեց. «Թվում է, թե նա ինձ չի վստահում: Արդյունքում մենք համաձայնվեցինք, որ նա ինձ Լոնդոնում կներկայացնի որպես հայերի բարեկամի, իսկ իր շրջապատում հանդես կգա խաղաղարարի դերում»[60]:

[60] C. D. I, p. 404.

Ունենալով այդպիսի բավական երերուն հենարան, սիոնական շարժման առաջնորդը նստեց գնացք, որը նրան տարավ Բրյուսել ու Օստենդե, եւ ընկնելով «ինչ-որ տհաճ ալիքների մեջ», նեղուցով տեղափոխվեց Դուվր: Հուլիսի 4-ին նա Լոնդոնում էր, ուր հույս ուներ «Հրեական գործակալության»՝ սիոնական շարժման քաղաքական թեւի հիմքը դնել: Այդ բոլորի իրականացման համար նրան հարկավոր էր օգնությունը Մակաբեյական ակումբի անդամների, մամուլի իր բարեկամների եւ անգլիական հրեաների, որոնք պտտվում էին քաղաքական եւ ֆինանսական շրջանակներում: Նրանից Լյուսյեն Վոլֆի հարցազրույց վերցնելուց հետո, Հերցլը գրառեց. «Վերջին մի քանի օրերի ընթացքում տեղական թերթերն սկսել են աղմուկ բարձրացնել»[61]: Նա սկսավ իրականացնել նաեւ հայկական առաքելությունը՝ խնդրելով Լ. Վոլֆին «մամուլում կազմակերպել ոչ մեծ արշավ՝ Հայկական հարցի շուրջ բորբոքումը սառեցնելու համար»: Նելլինսկուն նա հեռագրեց. «Փարոսների ու Հայկական հարցի հետ կապված գործն արդյունավետ է սկսվել»[62]: Սակայն, ֆինանսական ենթաբաժնում նրա մոտ ամեն ինչ հարթ չէր. «Եթե հրեական ֆինանսական աշխարհում հզոր մարդկանց չգտնեմ սուլթանին անհրաժեշտ փոխառության համար, ես Աքերոնը (անդրշիրիմյան աշխարհը հունական դիցաբանության մեջ) տակնուվրա կանեմ»: Հետո նա մտածեց փորձել փոխառությունը թողարկել «միջին ձեռքի բանկիրների, Բարնատո տեսակի աֆրի-

[61] Ibid., p. 407. Հարցազրույցները «Սանդեյ թայմզ»-ի եւ «Դեյլի տելեգրաֆ»-ի համար էին:

[62] Ibid., pp. 410-411.

կանդերների միջոցով»[63]: Սակայն Մամոնայի դարպասները բացելն այնքան էլ հեշտ չէր:

Քաղաքագետներին դիմելու Հերցլի փորձը ավելի խոստումնալից դուրս եկավ: Սըր Սեմուել Մոնտեգյուն ընդունեց նրան Համայնքների Պալատում եւ նրա կոստանդնուպոլսյան ուղեւորության հաշվետվության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեց: Հերցլը նաեւ Ալֆրեդ Կոհենին խնդրեց Ռոթշիլդի միջոցով իրեն ներկայացնել Սոլսբերիին՝ հայտարարելով, որ ինքն «ուզում է լորդ Սոլսբերիի քաղաքականությանը ծառայություն մատուցել Հայկական հարցի լուծման կապակցությամբ եւ դրանով իսկ վերականգնել Անգլիայի կորցրած ազդեցությունը Կ. Պոլսի վրա»: Կոհենը խոստացավ «դա քննարկել Ռոթշիլդի հետ հեծյալ զբոսանքի ժամանակ»[64]: Հուլիսի 10-ին նա խնդրեց բրիտանական "Hovevei Zion" ընկերությունից գնդապետ Գոլդսմիթին՝ թագուհու խորհրդատու Արթուր Կոհենի միջոցով կազմակերպել իր ներկայացումը դուքս Արչիլին, «որն ազդեցություն ունի հայկական կոմիտեի վրա»[65]: Նա նաեւ ցանկացավ Ուելսի իշխանի միջոցով ներկայացված լինել ռուսական ցարին[9]:

Սիոնական առաջնորդի հաջորդ գործողությունները Լոնդոնի հայ հեղափոխականների հետ ուղղակի կապի հաստատմանն ուղղված էին: Հուլիսի 11-ին նրանից հարցազրույց վերցրեց լրագրող Ռապոպորտը, որը լավ ծանոթ էր հայ շրջանակների, մասնավորապես «Հնչակ»-ի առաջնորդ Նազարբեկյանի հետ: Հերցլի արձանագրության մեջ այդ մասին ասված է հետեւյալը.

«Ռապոպորտն ինձ մատնանշեց, թե ինքը կասկածում է, որ հայ հեղափոխականներին ֆինանսական աջակցություն է ցույց տալիս անգլիական կառավարությունը:

Ես նրան խնդրեցի ինձ «մոտեցնել» Նազարբեկյանին: Այդ հեղափոխականին ես ուզում եմ բացատրել, որ հայերին այժմ անհրաժեշտ է խաղաղություն հաստատել սուլթանի հետ՝ առանձնակի նշանակություն չտալով նրանց վերջին հայտարարություններին, թե Թուրքիան պետք է մասերի բաժանվի»[66]:

Երկու օր անց Թեոդոր Հերցլը գնաց մետրոյի «Շեպերդս Բուշ» կայարան՝ Նազարբեկյանի հետ երկար սպասված հանդիպմանը: Սա նրա Լոնդոն մեկնելու հիմնական նպատակներից էր: Ահա՛ թե ինչպես է նա նկարագրել այդ տեսարանը.

«Տունը շատ աղմկոտ է, միջին շքեղությամբ, կահավորված միջին դասի ճաշակով. ժամանակ առ ժամանակ հայկական վայրի դեմքեր են երեւում: Նրանք փախստականներ են, որոնք այդտեղ ապաստան են գտել:

Ռուսահպատակ Ռապոպորտը ինձ ներկայացրեց: Նրա եւ տիկին Նազարբեկյանի[10] հետ հյուրասենյակում ես տանտիրոջն էի սպասում: Ասացի, որ դեռ չեմ նախաճաշել, որից հետո այդ կինը, դեմքի անբարյացակամ արտահայտությամբ, ինձ համար մսի մի կտոր բերեց:

[63] Ibid., pp. 407-412.

[64] Ibid., p. 413.

[65] Ibid., p. 414.

[9] *Մեծ Բրիտանիայի գահաժառանգ (Ուելսի իշխան, հետագային՝ կայսր) էդուարդը Ռուսաստանի Նիկոլայ Բ ցարի զարմիկն էր:*

[66] Ibid., pp. 414-415.

[10] *Մարիամ (Մարո) Նազարբէկ՝ Հնչակյան կուսակցության յոթ հիմնադիրների մեջ միակ կին անդամը:*

Նազարբեկը տուն եկավ: Հանճարի գլուխ, ինչպիսիք սովորաբար պատկերում են Լատինական թաղամասում[11]: Սեւ, գանգուր մազեր, սեւ մորուք, գունատ դեմք: Նա չի վստահում սուլթանին, եւ, մինչ հնազանդվելը, կցանկանար երաշխիքներ ունենալ: Նրա քաղաքական գաղափարներն անկանոն են, եվրոպական իրավիճակի մասին նրա իմացությունը միանգամայն մանկական է: Օրինակ, նա ասաց. «Ավստրիան ամրություններ է կառուցում Սեւ ծովում»:

Ինչպես երեւում է, Հայաստանում նրա խոսքին ենթարկվում են խեղճ մարդիկ, որոնց կոտորածի են ենթարկում: Նա ապրում է Լոնդոնում, սակայն առանց հատուկ հարմարությունների:

Ես հարցրեցի՝ գիտի՞ նա արդյոք, թե ո՞վ է ի վերջո օգուտ ստանալու այս ողջ հուզումներից՝ Ռուսաստա՞նը, թե՞ Անգլիան:

Նա պատասխանեց, որ դա իրեն չի անհանգստացնում, նա պայքարում է միայն թուրքերի դեմ:

Կինը ամբողջ ժամանակ ընդհատում էր մեզ՝ հայերեն ինչ-որ բան ասելով, ակնհայտորեն ընդդեմ ինձ: Նա թշնամական հայացք ուներ, եւ, ով գիտե, թե որքան պատասխանատվություն է կրում արյունահեղության համար: Կամ, հնարավոր է, որ դա վախեցած, հալածված մարդու սարսափելի հայացք է:

Խոստացա, որ կփորձեմ համոզել սուլթանին՝ դադարեցնել ջարդերը եւ նոր ձերբակալությունները, որոնք նրա բարի կամքի նշանները կլինեն: Սակայն նա դժվար թե կանխապես ազատ արձակի բանտարկյալներին, ինչպես ուզում է Նազարբեկը: Ես ապարդյուն բացատրեցի նրան, որ, վերջ ի վերջո, հեղափոխա-

[11] *Փարիզի հռչակավոր թաղամասերից մեկը, որի սրճարաններում սովորաբար հավաքվում էին մտավորականները:*

կանները, առանց զինաթափվելու, զենքերն իրենց ոտքերի մոտ, կարող են հետեւել խաղաղ բանակցությունների ընթացքին»[67]:

Նախքան Լոնդոնից մեկնելը, Հերցլը հանդիպեց Մոնտեգյուի հետ՝ իր հայկական առաքելությանը քաղաքական աջակցություն ցուցաբերելու հարցի կապակցությամբ: Մասնավորապես, նա արժանացավ խորհրդարանի անդամ, Անգլո-հայկական կոմիտեների փոխնախագահ Ֆրենսիս Ս. Սթիվենսոնի բարի ծառայություններին: «Ես բավարարված եմ իմ Լոնդոն կատարած ուղեւորության արդյունքներով»,- արձանագրեց «Օրակարգում»՝ ավելացնելով. «Այս պահին ինձ բավարարում է Մոնտեգյուի եւ Գոլդսմիթի պայմանական պարտավորությունը միանալու մեզ՝ եթե մասնակցեն էդմոնդ Ռոթշիլդը եւ Գիրշի ֆոնդը ու եթե սուլթանը դրական բանակցությունների մեջ մտնի»[68]: Սակայն, ինչպես հետագայում պատահեց, նա կորցրեց Մոնտեգյուի (եւ բրիտանական հրեության ամենահզոր մարդկանց) աջակցությունը, ինչպես գտնում է Ֆրենկելը՝ «(Մոնտեգյուին) շաբաթ օրը նրա ուղարկած բացիկի պատճառով»[69]:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հետագա ամիսներին՝ Հայկական հարցը կորցրեց իր հրատապությունը եւ տեղեկատվական գրավչությունը եվրոպական պաշտոնատներում ու մամուլի գրասենյակներում: Փոթորկի կենտրոնը

[67] Ibid., pp. 417-418.

[68] Ibid., p. 422.

[69] Ibid.

տեղափոխվեց Բալկաններ, ուր 1897թ. ապրիլին բռնկվեց Հույն-թուրքական պատերազմը: Հերցլը չհապաղեց թուրքամետ դիրք բռնել՝ կազմակերպելով պատերազմը վարելու մեջ Թուրքիային օգնելու ֆոնդ եւ կամավորների, ներառյալ բժիշկների ցուցակագրում, որոնք հանդես եկան Թուրքիայի կողքին: Ինչպես եւ հետեւում էր սպասել, նա գաղտնի հաղորդագրություն գրեց Վիեննայում թուրքական դեսպանին, ուր ընդգծեց, թե հրեաները լցված են հսկայական ցանկությամբ՝ օգտագործել այդ հնարավորությունը՝ ցուցադրելու իրենց հավատարմությունը Թուրքիային[70]: Հայկական հարցը հետին պլան մղվեց, դրա հետ մեկտեղ նաեւ՝ նոր ծնվող սիոնական շարժման առաջին դիվանագիտական նախաձեռնություններից մեկը:

Հրահրված օսմանյան փադիշահի կողմից, որն ընդունեց նրան «Խարտիայի» հեռանկարով, Թեոդոր Հերցլը 1896թ. երեք լարված ամիս վատնեց՝ փորձելով Եվրոպայի հայ հեղափոխական կոմիտեների մեջ ճեղքվածք առաջացնել: Նա չէր կարող այդ ուղղությամբ մեծ առաջընթացով պարծենալ: Այնուամենայնիվ, այդ բոլորը ցուցադրեցին նրա՝ մամուլի հետ վարվելու հմտությունը, մամուլի իշխանության արագ աճող դերի եւ նրանում առկա առավել խոցելի տեղերի իմացությունը, ազդեցիկ լրագրողներին իր կողմը գրավելու նրա ընդունակությունը: Միեւնույն ժամանակ, այդ բոլորը ցույց տվեցին սիոնականության առաջնորդի՝ Եվրոպայի քաղաքական ու դիվանագիտական կիսաշխարհի հետ կապեր հաստատելու հակումը. այդ կիսաշխարհը լեփ-լեցուն էր արկածախնդիրնե-

[70] Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl, p. 15.

րով եւ կասկածելի անձերով, որոնք տապալվող գահերի շուրջն էին պտտվում:

Այն, որ Հերցլը Հայկական հարցը դարձրեց ձեռնածության առարկա իր սեփական շահերին հասնելու համար՝ կասկած չի հարուցում, չնայած որ նրա մեքենայությունների բոլոր մանրամասնեների ու հետեւանքների բացահայտման համար անհրաժեշտ է քրքրել լրացուցիչ դիվանական նյութեր, հատկապես Հերցլի անձնական դիվանը, որը վկայակոչել է Ժիլբերը[71]: Հերցլը գրել է Մակաբեյական ակումբի նախագահ Սողոմոն Ժ. Սողոմոնին. «Հայերը պետք չէ իմանան, որ մեր մասնակցությունը հենվում է նեղ ազգային շահագրգռությունների վրա»[72]: Սա եւ նման այլ հիշատակումները մատնացույց են անում այն, որ Հերցլը հայկական ազգային շարժումը դիտել է որպես հնարավոր մրցակցի: Վաղ սիոնականության հարաբերությունը Օսմանյան կայսրության տարբեր ազգայնական շարժումների հետ՝ բավարար չափով չի ուսումնասիրված: Այնուամենայնիվ, Ժիլբերի հենվելը Նելլինսկու հաղորդագրությունների վրա եւ Կ. Պոլսում հրահանգների վերաբերյալ Հերցլի հարցադրումներն առնվազն խոսում են դեպի Եվրոպայի ժողովուրդների համակրանքն ու քաղաքական աջակցությունը հարուցելու ունակ մրցակից ազգային շարժումների գործունեության ու զարգացման նկատմամբ շահագրգռված լարվածության մասին: Այն նաեւ բարձրացնում է վաղ սիոնականության՝ ազգային այլ շարժումները,- ինչպես օրինակ նոր ծնվող արաբական ազգային շարժումը,- վերահսկելու աստիճանի հարցը: Հերցլի «Օրագրերի»

[71] Gelber, <Philip Michael de Newlinsky>, p. 125, note 19.

[72] Fraenkel, Lucien Wolf and Theodor Herzl, p. 9.

1904 թ. մարտի 5-ին գրված արձանագրություններում ասվում է. «Գոյություն ունի արաբական շարժում, որը նպատակադրվել է մահմեդական խալիֆայության ժառանգորդը դառնալ»[73]: Երեք տարի անց, մեկ ուրիշ սիոնական առաջնորդ՝ Հայիմ Վայցմանը Պաղեստին կատարած իր առաջին այցելության ժամանակ հաղորդել է, որ Անգլո-պաղեստինյան բանկի բաժանմունքի տնօրեն Վիկտոր Յակոբսոնից ինքն «առաջին անգամ է լսում ինչ-որ բան նորածին արաբական ազգային շարժման մասին»[74]:

Հերցլի մի քանի ընկերների մոտ կասկածներ կային Հայկական հարցում Հերցլի դիրքորոշման բարոյականության վերաբերյալ: Թեոդոր Հերցլի ամենաառաջին զինակիցներից մեկը՝ Բեռնարդ Լազարը դուրս եկավ սիոնական շարժման գործկոմի կազմից որպես բողոքի նշան իր առաջնորդի եւ Աբդուլ Համիդի միջեւ եղող կապի դեմ[75]: 1902թ. ֆրանսա-հայկական «Պրո-Արմենիա» ամսագրում իր հրապարակումներով, նա կատաղի հարձակման ենթարկեց սիոնականությունը: Հերցլի հակազդեցությունը «Օրագրերում» բնութագրական է. «Բեռնարդ Լազարը քարոզչական «Պրո-Արմենիա» թերթիկում հրատարակեց հրեշավոր գռեհիկ մի փոքրիկ հոդված իմ դեմ՝ Սիոնական կոնգրեսի եւ սուլթանի միջեւ շնորհավորանքների փոխանակման առիթով: Ինչպիսի շահ, բացի լայն վերաբերմունքից, կարող էր նա հետապնդել՝ պաշտպանելով հայերին»[76]: Եվ Հերցլը իր հայացքներով միակը չէր: Նրա մեծ հե-

[73] C. D. IV, p. 1616.

[74] Chaim Weizman, Trial and Error /New York: Schocken Books, 1966/, p. 125.

[75] Lazare Prajs, Peguy et Israel /Paris: Nizet, 1970/, pp. 64-65, 70.

[76] Nelly Jussem-Wilson, <Bernard Lazare's Jewish Journey>, Jewish Social Studies, 26 /July 1964/, p. 165.

տեւորդ Հայիմ Վայցմանն իր ապագա կնոջն ուղղված նամակում 1902թ.-ին հաղորդում է. «Երկար զրույց ունեցա (Էդուարդ) Բեռնշթեյնի եւ նրա դստեր հետ Բեռլինում: Ես նրան շշպռեցի այն բանի համար, որ նա հովանավորության տակ է վերցրել հայերի գործը եւ ոչ թե հրեական գործը»[77]:

[77] Leonard Stein, ed., The Letters and Papers of Chaim Weizmann /London: Oxford University Press, 1968/, Series A, Vol. I, p. 389.

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ, ՀՐԵԱՆԵՐԸ, ՄԱՍՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ*

(Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանի նամակը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին)

Գաղտնի.

Սըր Դ. Լոուքըրից Սըր Չ. Հարդինգին.

Անձամբ եւ մտերմական.

Ստամբուլ, 29 մայիսի 1910թ.

Թանկագին Չարլի,

Ձեր ապրիլի 25-ի հեռագիրը եւ Հոստի ապրիլի 23-ի հեռագիրը, ուղարկված Մուհամմեդ Ֆերիդին Ստամբուլի մասոնների կողմից եգիպտական պատգամավոր առաջադրելու առիթով ու նրա՝ «Միություն եւ առաջադիմություն» (Իթթիհադ վե թերաքքը) կոմիտեի հետ ունեցած մտերմական կապերի վերաբերյալ, ստիպում են ինձ ավելի մանրամասն պատմել երիտթուրքերի շարժման վրա եվրոպական մասոնության ազդեցության մասին:

Ես դա կանեմ անձամբ եւ մտերմական այն պատճառով, որ հակառակ Անգլիայի եւ Ամերիկայի, [Օսմանյան կայսրությունում] նոր մասոնությունը զգալիորեն գաղտնի է եւ քաղաքական: Այս թեմայի մասին բոլոր տեղեկությունները կարելի է ստանալ գաղտ-

* Վերնագիրը պայմանական է: Այս բաժնի էջատակի ծանոթագրությունները պատկանում են սույն գրքույկը կազմող-հրատարակողին:

նի, քանի որ նրանք, ովքեր կարող են տալ անհրաժեշտ բոլոր գաղտնի տեղեկությունները մասոնների մասին՝ վախենում են մաֆիայի ձեռքն ընկնելուց: Օրինակ, օրեր առաջ, տեղացի մասոններից մեկը, որն «ի լուր աշխարհի» հայտնել էր արհեստի նշանները, նախազգուշացվել էր ռազմական դրության օրենքները խախտելու մեղադրանքով դատարանի առաջ կանգնելու սպառնալիքով:

Մի քանի տարի առաջ, սալոնիկցի հրեա-մասոն Էմմանուել Կարասոն, որը հիմա Օսմանյան մեջլիսում[1] քաղաքի պատգամավորն է, Սալոնիկում հիմնեց իտալական ֆրանկմասոնության հետ կապված «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը: Միանգամայն ակնհայտ էր, որ այս մարդը աշխատանք էր տանում երիտթուրքերի ռազմական ու քաղաքական գործիչներին մասոնությանը հաղորդակից դարձնելու համար, որպեսզի Թուրքիայի նոր ղեկավարության շրջանում տարածվի Արեւելքի հրեական գաղտնի գործունեության ազդեցությունը[2]: Նրանք որեւէ օտարերկրացու տանն են

[1] Օսմանյան մեջլիս.- Օսմանյան կայսրության խորհրդարանի պաշտոնական անունը: Մեջլիսը առաջին անգամ հավաքվեց 1876թ.-ին՝ Միդհատ փաշայի կողմից առաջ քաշված սահմանադրության ընդունումից հետո: Մի քանի ամիս հետո, Աբդուլ Համիդ Բ-ը Սահմանադրությունը չեղյալ հռչակեց եւ մեջլիսը ցրեց: Մեջլիսը վերստին կյանքի կոչվեց երիտթուրքերի 1908թ. պետական հեղաշրջումից հետո:

[2] Այնքան մեծ են եղել հրեաների դերն ու ազդեցությունը երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքը» կազմակերպության ծննդի ու գործունեության մեջ, որ Կ. Պոլսի բրիտանական դեսպանության գլխավոր թարգման Հ. Ֆիտցմորիսը նրան անվանում է « «Միություն եւ առաջադիմություն»

հավաքվում՝ իբրեւ թե ազատվելու համար աբդուլհամիդյան լրտեսներից, եւ նա այնտեղ ճանաչում է նրանց իրավունքը՝ դառնալ օթյակի անդամ, արտասահմանում օգտվել դրա ընձեռած առավելություններից եւ պայքարել սուլթանի լրտեսական եղանակների դեմ:

Սակայն Աբդուլ Համիդի լրտեսներն իմացան այդ շարժման մասին: Ակնհայտ է, որ 1908թ. հուլիսյան ապստամբությունից հետո, նրանք գաղտնիքը կորզել են Իսմայիլ Մեհիր փաշա անունով մեկից (որը հետագայում խորհրդավոր կերպով մահացավ գիշերային վթարից)[3] եւ այդ մասին հայտնել Յըլդըզ պալատին[4]: Լրտեսները հանձնարարություն ստացան պարզել, թե սպաներից ու մյուսներից ովքե՞ր են օթյակ հաճախել: Ֆրանկմասոնները դրա դեմ իրենց միջոցները ձեռնարկեցին: Նրանք սկսեցին «եղբայրության» մեջ ներքաշել նաեւ գաղտնի ոստիկանությանը:

Չնայած երիտթուրքերի գործածած «Ազատություն, հավասարություն եւ եղբայրություն» բառերն ու իտալական ֆրանկմասոնների նշանախոսքերը համընկնում են[5], միանգամայն պարզ է, որ

հրեական կոմիտե» (տե՛ս Ֆորեյն օֆիսի դիվան, Լոուքըրի թղթեր, փաստաթուղթ թիվ F. O. 800/193 B):

[3] Խորհրդավոր պայմաններում սպանվեց նաեւ Կիլիկիայի 1909թ. կոտորածները հետաքննելու առաքելությամբ Կ. Պոլսի ազգային իշխանությունների կողմից Կիլիկիա ղրկված հանձնաժողովի նախագահ, Օսմանյան մեջլիսի պատգամավոր, իթթիհադական եւ մասոն Հակոբ Պապիկյանը:

[4] Յըլդըզ պալատը սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի նստավայրն էր:

[5] Այդ նշանախոսքերը նաեւ ֆրանսիական մասոնության նշանախոսքերն են, որոնք Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական նշանախոսքի

սալոնիկյան շարժման աղբյուրը հրեաներն են (երիտթուրքերի, ինչպես նաեւ իտալական ֆրանկմասոնության տարբերակող գույները կարմիրն ու սպիտակն են)[6]: 1908-ի հեղափոխությունից քիչ անց, երբ [«Միություն եւ առաջադիմություն»] կոմիտեն տեղափոխվեց Ստամբուլ, հայտնի դարձավ, որ նրա ղեկավարներից շատերը ֆրանկմասոն են: Կարասոն սկսեց երեւելի դեր խաղալ: Մասնավորապես, նա հասավ նրան, որ իր ձեռքն անցավ [«Միություն եւ առաջադիմություն»-ի] Բալկանյան կոմիտեն:

Տեղացի եւ արտասահմանցի հրեաներն սկսեցին նոր վարչակարգին արդյունավետ օգնություն ցույց տալ: Դա շարունակվեց այնքան ժամանակ, ինչպես մի թուրք բացատրեց, քանի դեռ ժողովուրդը չսկսեց խոսել, թե ամեն մի հրեայի կարելի է գաղտնի կոմիտեի լրտես համարել եւ թե ամբողջ շարժումը ոչ այնքան թուրքական, որքան հրեական հեղափոխություն էր: Իտալիայի կառավարությունը որպես գլխավոր հյուպատոս Սալոնիկ ուղարկեց հրեա մասոն Պրիմո Լեւիին, որը, մինչ այդ, արտաքին ներկայացուցչության փորձ չուներ: Ամերիկայի դեսպան նշանակվեց Օսկար Շտրաուսը, որը Ջեյկըբ Շիֆֆի հետ ամերիկացի հրեաների վրա մեծ ներգործություն ունեցավ հրեաների Միջագետք արտա-

են վերածվել Ֆրանսիական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո եւ այսօր էլ զարդարում են Ֆրանսիայի Հանրապետության խորհրդանիշները:

[6] Մուստաֆա Քեմալի կողմից հիմնված Թուրքիայի Հանրապետության պետական դրոշի գույներն էլ կարմիրն ու սպիտակն են. կարմիր ուղղանկյան մեջ սպիտակով պատկերվում են աստղն ու մահիկը:

գաղթի հարցում: Դա սիոնականության զարգացած հոսանքներից էր, որը հանդես էր գալիս ուրիշ «հայրենիքի» ծրագրի դեմ[7]:

Դուք հավանաբար քաջատեղյակ եք, որ ուղղափառ մուսուլմանները մասոնության հանդեպ ուժեղ նախատրամադրվածություն ունեն՝ այն համարելով անգամ ամենաանհավատությունից էլ վատ: Կոմիտեի դեմ ելույթների ժամանակ, որոնք իրենց գագաթնակետին հասան 1909թ. ապրիլի 13-ին[8], տվյալ գործոնը շատ մեծ դեր խաղաց: Այդ իրադարձությունները հիմա էլ լիովին պարզաբանված չեն, բայց եւ այնպես, արդեն այն ժամանակ, մի հանգամանք ուշադրությունից չէր կարող վրիպել. չորս գումարտակ, որոնք Սալոնիկից հատուկ ուղարկված էին Ստամբուլ եւ որոնց Քյամիլ փաշան պահանջեց հետ ուղարկել 3-րդ բանակի հրամանատարություն, այդ ապստամբության (կամ, ինչպես այդ իրադարձությունները անվանում են՝ «հետադիմական գործողությունների») նախաձեռնողներն էին: Նրանց գլուխն էր դեոնմե-հրեա եւ մասոն Ռեմզի բեյը: Փոխանակ իրեն վստահված մասերում գործողություններ ծավալելու համար Ռեմզի բեյին ռազմական դատարան հանձնելու, նրան փադիշահ[9] Մեհմեդ Ե-ի (Ռեշադ)[10] համհարզ կարգեցին: Կարասոն նրանցից մեկն էր, որ Աբդուլ Համիդին ներկայացրեց [նրա] գահընկեցության մասին ուղերձը: Ծեր փադիշահը Սալոնիկ տարվեց ու բանտարկվեց այնտեղի իտալացի հրեա բանկիրների ամրոցում: Նրան հսկելու համար՝ Կոմիտեն նշանակեց Ռեմզի բեյի եղբայրներից մեկին: Աբդուլ Համիդին վնասազերծելուց հետո, հրեական թերթերը «բռնակալից, Իսրայելի կեղեքչից» ազատվելու ճիչ բարձրացրին: Աբդուլ Համիդը երկու անգամ արհամարհել է սիոնականության առաջնորդ Հերցլի դիմումը իրեն[11] եւ խոչընդոտել [սիոնականների] պաղեստինյան իդեալների իրականացմանը՝ մտցնելով «կարմիր անձնագրեր» (ճիշտ այնպես, ինչպես օտար քաղաքացիների մասին մեր օրենքն է)՝ Լեհաստանից եւ այլ երկրներից հրեա գաղթականների դուրս գալու դեմ: 1909թ. դեկտեմբերին Համբուրգում կայացած 9-րդ սիոնական համագումարում, որպես «Թուրքական հեղափոխության հրաշքի» արդյունք, հրեական աշխարհում հայտարարվեց սիոնականների եւ «ուրիշ հայրենիք» ձեռք բերելու կողմնակիցների միջեւ եղած տարաձայնությունների վերացումը: Նույն օրերին, Սալոնիկի պատգամավոր, հաջողակ եւ խելոք դեոնմե-հրեա ու մասոն Ջավիդ

[7] Սիոնական շարժման առաջին տարիներին, խորը տարակարծություններ կային ապագա հրեական պետության վայրի շուրջ: Սիոնականների մի մասը, Թեոդոր Հերցլի ղեկավարությամբ, պնդում էր Պաղեստինի վրա, մինչ շատ ուրիշներ չեին բացառում աշխարհի տարբեր վայրերը՝ ԱՄՆ-ի մեկ նահանգը, Արգենտինան, Գանան, Ուգանդան եւ այլն:

[8] Այդ օրերին Կիլիկիայի եւ Հալեպի նահանգի արեւմտյան շրջանների հայոց կոտորածը իր գագաթնակետին էր հասել: Կոտորածներն սկսվեցին ապրիլի 1-ին ու տեւեցին մինչեւ ամսի 4-ը: Կարգն ու կանոնը իբր վերահաստատելու համար Ռումելիայից (Թրակիա) ժամանած զորքը ինքեւս, թուրք խուժանի կողքին, մասնակցեց կոտորածների երկրորդ փուլին՝ 12-14 ապրիլին:

[9] Փադիշահ.- Պարսկերեն՝ «թագավոր հայր». Օսմանյան սուլթանների բազմաթիվ տիտղոսներից մեկը:

[10] Օսմանյան կայսրության սուլթան 1909թ. ապրիլից մինչեւ իր մահը 1918թ.-ին: Աչքի է ընկել է իր թուլակամությամբ եւ հարբեցողությամբ:

[11] Տե՛ս այս գրքույկի առաջին մասը՝ «Թեոդոր Հերցլը եւ Հայկական հարցը»:

բեյը[12] ֆինանսների նախարար նշանակվեց: Մեծ վեզիր Հիլմի փաշան դիմեց մասոնների շարքերում ընդգրկվելու խնդրանքով, բայց «ծեսերը չկատարեց»[13]:

Երկրում երկու տարի ժամկետով ռազմական դրություն հայտարարվեց: Ռազմական դատարանի շատ սպաներ ֆրանկմասոն էին: Խորհրդարանին «հրամայվեց» մամուլի մասին խիստ օրենք մտցնել: Մամուլի գրասենյակի ղեկավար առաջ քաշվեց եւս մեկ դեոնմե-հրեա մասոն Սալոնիկից: Դա շատ պատասխանատու պաշտոն էր, որովհետեւ այն զբաղեցնող անձը կարող էր որեւէ թերթ արգելել ու ռազմական դատարան կանչել խմբագրին կամ սեփականատիրոջը՝ «նոր վարչակարգը քննադատելու» մեղադրանքով: Կիսապաշտոնական Օսմանյան հեռագրային ծառայությունը, որն արտահայտում էր Կոմիտեի կարծիքը օսմանների ներքին եւ արտաքին գործերի վերաբերյալ, գործողության մեջ դրվեց բաղդադցի մի հրեայի ղեկավարությամբ: Միեւնույն ժամանակ, ոստիկանության հին նախարարության փոխարեն ստեղծվեց Հասարակական անվտանգության կազմակերպությունը՝ սալոնիկցի մի հրեայի ղեկավարությամբ, որը միաժամանակ հսկում էր թե՛

[12] Ջավիդ բեյ.- Երիտթուրքերի պարագլուխներից: Գործուն մասնակցություն է ունեցել հայոց Մեծ եղեռնի ծրագրավորման եւ իրականացման մեջ: Աջակցել է Մուստաֆա Քեմալի շարժումին՝ հատկապես ֆինանսապես: Այդուհանդերձ, հիմնական դերակատարություն է ունեցել Քեմալի դեմ մի խումբ նախկին իթթիհադականների դավադրության ծրագրավորման մեջ: Հակառակ միջազգային սիոնիզմի ու մասոնության կողմից Քեմալին արված բազմաթիվ դիմումների, ճնշումների եւ նույնիսկ սպառնալիքների, նրա կողմից մահապատժի է ենթարկվել 1926թ.-ին:

[13] Այսինքն՝ մերժվեց մասոն դառնալու նրա դիմումը:

ոստիկանությանը եւ թե՛ ժանդարմերիային: Բացի այդ, խորհրդարանին «հրամայվեց» «Կազմակերպությունների մասին» օրենք անցկացնել, որի վրա հենվելով, «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն կարող էր արգելել իր նման բուլղարական, հունական եւ այլ կազմակերպությունների գործունեությունը՝ նրանց առաջացման դեպքում:

Այժմ հարկ է նշել եւս մեկ երեւույթ. Մակեդոնիայի մեծ ու փոքր քաղաքներում, ինչպես նաեւ նրա մայրաքաղաքում[14] մասոնական օթյակներն սկսել են «սնկի նման» աճել: Անցած տարի մայրաքաղաքում հիմնվել է 12 օթյակ:

Ոչ մեկ հարցաքննություն կամ հետաքննություն պետք չէ՝ հասկանալու համար, որ մասոնական գործունեության գաղտնիության պահպանումը միջոց է թաքցնելու համար Կոմիտեի իսկությունը, թեեւ նա մինչ այդ հայտարարել է, որ գաղտնի կազմակերպություն չէ; Ակնհայտ է, որ ընդհատակյա քարոզչություն է տարվում, թե բազմաթիվ բարձրաստիճան ծառայողների եւ այլ անձնավորությունների դիրքն ու առաջխաղացումը կախված են նրանց «եղբայրներ» լինելուց: Խոսակցություններ եղան, թե մասոնության շնորհիվ Թուրքիայի օգտին են լուծվելու եգիպտական[15], կրետե-

[14] Նամակագիրը նկատի ունի Սալոնիկ քաղաքը:

[15] Խոսքը Եգիպտոսը 1882թ.-ից սկսած բրիտանական փաստացի գրավումից վերստին Օսմանյան ամբողջական գերիշխանության վերադարձնելու մասին է:

յան[16] եւ մյուս հարցերը, թե մասոնների առաջ բացվելու են քաղաքական աշխարհի կարեւորագույն գաղտնիքները, թե մասոնները դառնալու են Անգլիայի ծեր թագավորի[17] եղբայրները, ում հետ կհանդիպեն եւ ձեռք կսեղմեն նրա Ստամբուլ այցի ժամանակ: Նոր անդամներից շատերն սկսեցին հաճախել ավելի վաղ ստեղծված «Լա Թուրքի»[18] անգլիական օթյակը: Ոմանց հաջողվեց մտնել նրա մեջ, թեեւ շատ ջանքեր թափվեցին դրա համար... Ասում են, թե որոշ նոր օթյակներ, ինչպես Եգիպտոսի օթյակները, իրենց ծիսակատարությունները հին շոտլանդական ծեսով են անցկացնում: Խոսակցություններ տարածելով, թե իբր իրենց մոտ կան Անգլիայի թագավորի «պահպանվող վկայագրերը», որոնք ձեռք են բերվել Շոտլանդիայի Մեծ օթյակի միջոցով, ձգտում են օգտագործել այն վստահությունը, որը տածում են օսմանյան հասարակության բոլոր խավերը Անգլիայի նկատմամբ: Բանակում Կոմիտեի ազդեցությունը տարածելու համար, սպաներին ընդունում են մասոնության մեջ՝ նրանց «Ռենզե» օթյակի անդամ դարձնելով: Կոմիտեի պատգամավորների եւ ծերակուտականների[19] մեծամասնությունը մասոն է դարձել եւ ընդունվել «Սահմանադրություն» («Լա Կոնստիտուսիոն» կամ «Կանունի էսասի») օթյակի մեջ: Նրանց առաջիններից էին ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը[20] եւ ֆինանսների նախարար Ջավիդ բեյը: Ընդդիմության պատգամավորներից մի քանիսը, հատկապես արաբները, տեսնելով, որ մի կողմ են մնում քաղաքական գաղտնիքներից եւ վարչական ղեկից, նույնպես սկսեցին միանալ օթյակներին կամ նորերը ստեղծել, ինչպես, օրինակ, «Օսմանյան եղբայրություն» («Ուխուվվետի օսմանիե») եւ «Ազատության բարեկամներ» («Մուհիբանի հյուրրիեթ»):

Վերոհիշյալ օթյակների որպես լրացում, 1909-1910թթ. ստեղծվեցին հետեւյալ օթյակները. «Արեւելքի հավատարմություն»[21],

[16] Հունաբնակ, բայց Օսմանյան գերիշխանության տակ մնացած Կրետե կղզու բնակչությունը 1897թ.-ին ապստամբեց Օսմանյան տիրապետության դեմ, ինչն առաջնորդեց Հույն-թուրքական պատերազմի: Մեծ պետությունների ջանքերի շնորհիվ խաղաղությունը վերահաստատվեց՝ կղզուն Լիբանանի նման ինքնավարության շնորհումով, թեեւ դա չլուծեց Կրետեի խնդիրը: 1912-13թթ. Բալկանյան պատերազմներից հետո կնքված Լոնդոնի 1913թ. համաձայնագրով՝ կղզին փոխանցվեց Հունաստանի: Կղզու այդ կարգավիճակն ամրագրվեց Առաջին աշխարհամարտից հետո կնքված համաձայնագրերով (մասնավորաբար 1923թ. Լոզանի դաշնագրով):

[17] Խոսքը Մեծ Բրիտանիայի թագավոր եւ Հնդկաստանի կայսր, մասոն Էդուարդ Զ-ի մասոնական անդամության վկայագրերի մասին է:

[18] Լա Թուրքի.- Ֆրանսերեն՝ Թուրքիա:

[19] Օսմանյան մեջլիսը բաղկացած էր երկու պալատներից՝ ստորին (ներկայացուցիչների կամ պատգամավորների, որոնց ժողովուրդն էր ընտրում) պալատ կամ «Մեջլիս մեբուսան» եւ վերին (երեւելիների կամ ծերակուտականների, որոնց նշանակում էր սուլթանը) պալատ կամ «Մեջլիս այան»:

[20] Մեհմեդ Թալեաթ.- Երիտթուրք գլխավոր ղեկավարներից, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար, 1916-1918թթ.-ին Մեծ վեզիր (վարչապետ): Մեծ եղեռնի հիմնական ծրագրավորողներից ու իրականացնողներից: Սպանվեց 1921թ. մարտի 21-ին, Բեռլինում, վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի արձակած փամփուշտով:

[21] «Արեւելք» (եվրոպական մի շարք լեզուներով՝ Orient) բառը մասոնների շատ հաճախ օգտագործած բառերից է եւ մասոնական բառացանկում խորհրդավոր իմաստներ ունի: Պետությունների մասոնական գլխավոր

«Անկեղծ բարեկամներ», «Միություն եւ առաջադիմություն», «Բիզանցիո Ռիզորտո», «Լա Վերիտե»[22], «Լա Պատրի»[22], «Լա Ռընեսանս»[23] եւ, Եգիպտոսի ընդհատակյա քաղաքական հետաքննիչների համար բավական հայտնի «Լուսաբացը»[24], որը «Մակեդոնիա Ռիզորտայի» մի բաժինն է: Այս ամբողջ մասոնական ցանցը, սալոնիկյանի ու մակեդոնականի նման, հրեաների ձեռքում է գտնվում, որոնք կա՛մ անմիջականորեն են ղեկավարում բոլոր օթյակները, կա՛մ ուղղորդում են դրանց գործունեությունը: Հայերը, հույները եւ տեղացի մյուս քրիստոնյա տարրերը ներկայացված չեն, եթե չասենք, որ նրանք ընդհանրապես այդ գործունեությունից դուրս են[25]: Վերեւում ես արդեն նշել եմ եգիպտացի իշխան Սաիդ

օթյակները իրենց անվան վերջին կրում են «Արեւելք» բաղադրիչը: «Արեւելքը» մասոնների մոտ չունի աշխարհագրական նշանակություն:

[22] Լա Վերիտե.- Ֆրանսերեն՝ ճշմարտություն:

[22] Լա Պատրի.- Ֆրանսերեն՝ հայրենիք:

[23] Լա Ռընեսանս.- Ֆրանսերեն՝ վերածնունդ:

[24] «Լուսաբաց».- Արաբերեն եւ թուրքերեն՝ «Շաֆակ», որը Եգիպտոսի մասոն վերնախավի հիմնական օթյակն էր: «Շաֆակին» անդամ էին նաեւ եգիպտահայ քաղաքական եւ տնտեսական երեւելի բազմաթիվ գործիչներ:

[25] Բրիտանացի դիվանագետի այս հաստատումը ճիշտ չէ: Հայազգի մարդիկ (իթթիհադական իշխանության տարիներին Հանրային աշխատանքների եւ Արտաքին գործերի նախարարներ Պետրոս Հալաջյանը եւ Գաբրիել Նորատունկյանը, Օսմանյան մեջլիսի պատգամավորներ Հակոբ Պապիկյանը եւ Գրիգոր Զոհրապը ու շատ ուրիշներ) բավական գործուն ընդգրկվել էին Օսմանյան մասոնական օթյակներում: Այսուհանդերձ, դա թուրք-դեոնմե հրեա իթթիհադական «եղբայրներին» չխանգարեց, որ պատեհ առիթին ֆիզիկապես վերացնեն նրանց մեծ մասին:

Հալիմի[26] մասին: Նա, իր եղբայր Աբբաս Հալիմը, իշխան Ազիզ Հասանը[27] եւ այլ եգիպտացիներ, ատելություն զգալով Նորին գերազանցություն խդիվի[28] նկատմամբ, ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեին եւ անձնական մասնակցություն ունեցան նրա աշխատանքներին: Եգիպտական մասոնության կապը երիտասարդ թուրք մասոնության՝ Սալոնիկից մայրաքաղաք տեղափոխվելու գործընթացի հետ՝ այդքան էլ պարզ չէ, սակայն ակնհայտ է, որ դա քաղաքականության մեջ Վոսփորի ափերում նախօրոք հայտնված որոշ հոսանքների արդյունքն է: Մասոնության կատաղի հակառակորդ, այն գաղտնի կազմակերպություն համարող եւ մասոնների ղեկավարած մակեդոնական ուժերը մայրաքաղաք մտցնելու մեջ վըտանգ տեսնող Աբդուլ Համիդին տապալելուց որոշ ժամանակ անց՝ տարբեր հանդիպումներ ու բանակցություններ սկսվեցին: Անհրաժեշտ լիազորությունները ստացվել էին իտալա՛սն «Մեծ Արեւելք» («Գրան Օրիան») օթյակից, եւ իշխան Հասանը, Յուսուֆ Սակակինի բեյի օգնությամբ բելգիական մասոնության Գերագույն խորհրդից ստացած հատուկ լիազորությունների շնորհիվ, 33 աստի-

---

[26] Եգիպտոսի՝ ալբանական ծագումով խդիվական իշխանության տոհմից: Օսմանյան կայսրության Մեծ վեզիր 1913-1916 թվականներին: Մեծ եղեռնը ծրագրավորողներից: Սպանվել է Հռոմում, 1921թ. դեկտեմբերի 6-ին, հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի ձեռքով:

[27] Ազիզ Հասան.- Առաջին աշխարհամարտից հետո՝ Եգիպտոսի սուլթան 1920-1922 թթ.-ին:

[28] Խդիվ.- Եգիպտոսի օսմանյան անվանական իշխանության փոխարքա-կառավարիչ՝ ժառանգական իրավունքներով: Նամակի գրության տարիներին, Եգիպտոսի խդիվն էր Աբբաս Հալիմը (Աբբաս Բ-ը):

ճան[29] ստացավ եւ պարտավորություն վերցրեց Թուրքիայում «Մեծ Արեւելք» ստեղծել: Դա 1909թ. հուլիսին կամ օգոստոսին էր: Հենց այդ ժամանակ էլ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը Մեծ Վարպետ[30] դարձավ... Այսպիսով, պարզվում է հետեւյալը. 1909թ. ապրիլին Աբդուլ Համիդի նկատմամբ մակեդոնական ուժերի հաղթանակը թվում է իտալական ֆրանկմասոնության հաղթանակ անգլիացիների կողմից ճանաչված «Եգիպտոսի Մեծ օթյակի» դեմ...

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը (նա գնչուական ծագում ունի) եւ ֆինանսների նախարար Ջավիդը (դեոնմե-հրեա) Կոմիտեի գաղտնի ուժերի պաշտոնական ներկայացուցիչներն են: Նրանք նախարարների խորհրդի միակ [մասոն] անդամներն են եւ ֆրանկմասոնության գագաթնակետերը Թուրքիայում: Այն բանից հետո, երբ Թալեաթ բեյը ներքին գործերի նախարար դարձավ մոտ մեկ տարի առաջ, պատասխանատու պաշտոնների սկսեցին նշանակվել միայն մասոններ կամ կոմիտեի հետ կապված մարդիկ,

[29] Մասոնական նվիրապետությունը (հիերարխիա) բաղկացած է 99 աստիճանից, որոնցից 34-99-րդ աստիճանները գերգաղտնի են ու բացառապես հրեաների մենաշնորհը: Մասոնական «սովորական» օթյակում բարձրագույն աստիճանը 33-րդն է, որն ունեցողը կոչվում է Մեծ Վարպետ, Գերհարգելի Վարպետ կամ Մեծ Մագիստրոս:

[30] Մեծ Վարպետը «սովորական» (33 աստիճան կարգասանդղակով) մասոնական օթյակներում բարձրագույն պաշտոնն է: Միայն 33 աստիճան ունեցող մասոններին է թույլատրվում օթյակի Մեծ Վարպետ «ընտրվել»: Մեծ Վարպետն է նախագահում եւ վարում օթյակի նիստերն ու գործունեությունը:

իսկ, ամենից հաճախ, այս երկու որակները իրենց մեջ համատեղող դեմքեր: Այսպիսով, մասոնական կոմիտեի ցանցը տարածվեց ողջ կայսրությունով: Դրա նպատակը հետեւյալն է. եթե պատահականորեն կամ արտակարգ իրադրության ծանր ճնշման որպես հակադարձություն այսօրվա մեջլիսի մեծամասնությունը այնպիսի ընդդիմադիր դիրք գրավի, որ վտանգ սպառնա Թալեաթի եւ Ջավիդի նախարարական պաշտոններին, այդ մարդիկ դրությունն անմիջապես կփոխեն պետական հեղաշրջման միջոցով, կլուծարեն մեջլիսը, որից հետո տեղերում ընտրություններ կանցկացնեն եւ մասոնական օթյակների ու կոմիտեական ակումբների օգնությամբ ավելի ձեռնտու պատգամավորներ կընտրվեն: Այսպիսով, Թուրքիայի քողածածկված կառավարությունը «Մեծ Արեւելքն» է՝ Մեծ վարպետ Թալեաթ բեյի գլխավորությամբ:

Վերոհիշյալ բոլորից, ինչպես եւ երիտթուրքերի շարժման այսօրվա դրության ամեն այլ դիտարկումից ակնհայտ է դառնում, որ Օսմանյան կայսրության մյուս հիմնական տարրերի (արաբներ, հույներ, հայեր, բուլղարներ) իբրեւ հակակշիռ՝ հրեաներն այստեղ հանդես են գալիս որպես «թուրքեր»: Թուրքերը հիմնականում մարտիկ են, զինվոր: Նրանք ձգտում են իրենց ռասայական գերակայությունը ամրապնդել ինչ-որ սահմանադրական ձեւերով, իսկ դա հնարավոր է անել միայն հրեական խողովակներով: Բանակը, որի մեջ ներդրվում է [կայսրության] ամբողջ եկամտի կեսը, օգտագործվում է մյուս խմբավորումները ահաբեկության մեջ պահելու եւ ընդդիմադիր ելույթները ճնշելու համար: Մի կողմից, Սահմանադրությունը նախատեսում է ինչ-որ տնտեսական զարգացում, սակայն, Թուրքիայի տնտեսության կառույցը ամենաթույլերից է, եւ, առանց օժանդակության, նույնիսկ մեկ շաբաթ չի գոյատեւի: Սկզ-

բում ենթադրվում էր, որ տնտեսության օժանդակության պարտականությունը պիտի կատարեն հայերը, բուլղարները, հույներն ու օսմանցի հրեաները: Սակայն, երիտթուրքերը կապ հաստատեցին միայն օսմանցի եւ արտասահմանցի հրեաների հետ: Նրանց օտարումը մյուս ժողովուրդներից՝ ակնհայտ դարձավ: Հունգարները, որոնք նույնպես թուրքական ժողովուրդ են[31] եւ որոնք եւս գործարար որակներ չունեն, նույնպես ընկան հրեաների տնտեսական ու ֆինանսական տիրապետության տակ: Մենք արդեն ապացույցներ ունենք, որ Հունգարիա այդպիսի վախճան ունեցավ: Երեւում է, որ հրեան, իր տնտեսական բարձր գիտակցությամբ, թուրքին ծուղակը գցեց: Քանի որ Իսրայելի սուրբ հողերը գտնվում են թուրքական սահմանների ներսում, բնական է հրեաների ձգտումը՝ նշանակալից դիրք գրավել, որպեսզի դրա օգնությամբ իրականացնեն իրենց իդեալները՝ ստեղծել իսրայելական անկախ պետություն Պաղեստինում կամ Բաբելոնում: Եթե հրեաները հասնեն իրենց նպատակներին, որոնց ձգտել են երկար տարիներ, ու եթե նրանց նաեւ հաջողվի թուրքերից ստանալ հրեաների Թուրքիա ազատ մուտքի թույլտվություն, ապա նրանք Միջագետքում կվերաբնակեցնեն իրենց մի քանի միլիոն հավատակիցներին, որոնք Ռուսաստանում եւ Ռումինիայում փակուղում են հայտնվել: Հրեաների «բռնի խնամակալության» կարծեք որպես պատասխան, նրանք երիտթուրքերին առաջարկեցին զոհել իրենց լեզուն, խոսել թուրքերեն եւ նույնիսկ խոստացան ամբողջովին վճարել Օսմանյան կայսրության պետական բոլոր պարտքերը:

[31] Բրիտանացի դիվանագետը ճիշտ չէ: Հունգար ազգի հիմնական կորիզը կազմող մաջյարները, ինչպես նաեւ թուրքերը, չինացիները, ճապոնացիները եւ այլ ազգեր, պատկանում են դեղին ռասային: Մաջյարները պատկանում են դեղին ռասայի ուգրո-ֆիննական լեզվաընտանիքի ժողովուրդներին, որոնք շատ հեռավոր աղերսներ ունեն ժամանակակից թուրքերի հետ:

Այն բանից հետո, երբ Սալոնիկի կոմիտեի ազդեցիկ գործիչներից մեկը՝ դոկտոր Նազիմը (ասում են, թե նա հրեական ծագում ունի)[32] սալոնիկցի դեոնմե-հրեա Ֆաիկ Տոլեդո բեյի հետ այցելեց կազմակերպության Փարիզի մասնաճյուղը՝ հրեական գաղութ ստեղծելու հարցով, բացահայտորեն ծրագրեցին 200 հազար հրեաների Մակեդոնիայում եւ մի քանի միլիոն ռուսական հրեաների Միջագետքում վերաբնակեցումը: Այդ թեման շոշափելով, Իսրայել Զանգվիլը «Ֆորտնայթ ռեվյու»-ում հույս հայտնեց, որ Մեծ վեզիր Հակկը փաշան այն մարդն է լինելու, որը կկարողանա Միջագետքում հրեական անկախ պետության ստեղծման հարցը արդյունավետ կերպով դնել Բարձրագույն դրան[33] առաջ: Հակկը փաշայի անձնական քարտուղարը մի հրեա նշանակվեց: Ինքը՝ Հակկը փաշան, հաճախ այցելում է հրեաների տները, սակայն հրեաների ծրագիրները մինչեւ հիմա չեն իրականացվել: Կասկած չկա, որ երիտթուրքերը, ռազմական խոշոր ծախսերի պատճառով մեծ պարտքերի մեջ խրվելու անհրաժեշտության առաջ հայտնվելով, կհայտնվեն իրենց հրեա պարտատերերի ուժեղ ճնշման տակ:

[32] Մեծ եղեռնի հիմնական ծրագրավորողներից ու իրագործողներից մեկը: Ղեկավարել է դա իրագործելու կոչված «Թեշքիլաթը մախսուսե» («Հատուկ կազմավորումներ») կառույցը:

[33] Բարձրագույն դուռ (թուրքերեն՝ Բաբը ալի).- Օսմանյան կայսրության կառավարության նստավայրի անունը:

Սուլթան Աբդուլ Համիդը, երբ ինք եւս մի ժամանակ գտնվել էր ֆինանսական շատ ծանր դրության մեջ, մերժել էր սիոնական առաջնորդ Հերցլի[34] կողմից եղած նմանատիպ աջակցության առաջարկությունը: Նույն միտքը կրկնում է Զանգվիլը, երբ գրում է. «Քանի դեռ երիտթուրքերը ավելի քիչ առողջ միտք ունեն, քան փող, պետք է նրանց հասկացնել, որ նրանց կայսրության համար մեծ առավելություն կլինի գործարար եւ անռազմունակ սպիտակամաշկ բնակչության ազատ ներգաղթը...»

Սիոնական «լ'Օրոր»[35] թերթը, որը մեկ տարի առաջ սկսեց լույս տեսնել Ստամբուլում, իր ընթերցողներին անդադար հիշեց-

[34] Թեոդոր Հերցլ.- Ավստրիացի հրեա, մասնագիտությամբ լրագրող: Հեղինակել է «Հրեական պետություն» անունով սիոնիզմի գաղափարախոսության անկյունաքարային աշխատությունը: Նախաձեռնել է սիոնական շարժումը, որի վերջնական նպատակն էր Իսրայել հրեական պետության ստեղծումը Պաղեստինում: 1897թ.-ին, Շվեյցարիայի Բազել քաղաքում, Հերցլի ղեկավարությամբ, գումարվեց սիոնական 1-ին համագումարը, որը որոշեց ստեղծել հրեական պետություն: Սակայն պատգամավորները տարակարծություններ ունեցան այդ պետության վայրի շուրջ: Թ. Հերցլը բանակցություններ է վարել Աբդուլ Համիդ Բ-ի եւ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեգի հետ, երկու դեպքում էլ խոստանալով «լուծել» Հայկական հարցը հօգուտ բանակցության մյուս կողմի՝ սիոնական ծրագրերին նրանց աջակցության դիմաց: Երկու կողմերից էլ նա կտրուկ մերժումի է արժանացել (տես այս գրքույկի առաջին մասը):

[35] Ֆրանսերեն «Օրոր», ռուսերեն «Ավրորա» ու համահունչ բառերը եւրոպական բազմաթիվ լեզուներում նշանակում են «լուսաբաց»: Հիշենք, որ այս անունն էր կրում Եգիպտոսի մասոնական վերնախավի օթյակը:

նում է, որ հրեաների գերիշխանությունը Եգիպտոսում,- այն երկրում, որտեղ փարավոնները հրեաներին բռնությամբ ստիպեցին բուրգերը կառուցել,- կազմում է մի մասը միայն այն ժառանգության, որին ապագայում պետք է տիրի Իսրայելը: Բայց, ամեն դեպքում, հրեաների վերջնական նպատակներն են մնում Միջագետքն ու Պաղեստինը: Այս տեսությունը, իսկապես, հույժ անհավանական է թվում, բայց ակնհայտ է, որ այն պաշտպանվում եւ տարածվում է մի քանի իդեալիստների կողմից: Առաջին նպատակը, որին նրանք ձգտում են հասնել, Թուրքիան եւ այդ երկրի բոլոր փողային ներդրումները ամբողջությամբ իրենց ձեռքի տակ վերցնելն է: Ինչպես նախապես արդեն ասվել է, արտոնություններ տրամադրելու իրավունք ունեցող Հանրային աշխատանքների նախարարությունը գտնվում է մի հայի՝ [Պետրոս] Հալաջյանի ձեռքում: Իսկ երիտթուրքերի կառավարական մեխանիզմի կարեւորագույն կետերը կա՛մ գրավել են հրեաները, կա՛մ գտնվում են նրանց հսկողության ներքեւ: Երբ Հալաջյան էֆենդիի նույնպես հայ նախորդին հեռացրին այդ պաշտոնից, ամենավճռական քայլեր արվեցին, որ նրա տեղը դնեն մի հրեա կամ մի թեկնածու, որին հրեաները թիկունք կանգնեն: Սակայն հայերը, հատկապես Ադանայի կոտորածից հետո, ծայրագույն անհրաժեշտություն են զգում ամեն գնով իրենց ձեռքում պահելու գոնե մեկ հանգուցային կետ նախարարների խորհրդում: Երկու ամիս առաջ թվում էր, որ Հալաջյանը ուր որ է ընկնելու է, չի կարողանալու դիմակայել: Սակայն, նա ապրելու նոր հնարավորություններ գտավ մասոն դառնալով, մտնելով այն օթյակը, որի մեջ է Թալեաթ բեյը: Ստույգ է, որ նրա դրությունը նորից անկայուն է: Ասում են, որ նրա տեղը պետք է զբաղեցնի մեկը, որը կա՛մ հրեա, կա՛մ էլ թիկունքում հրեա

ունեցող թուրք է լինելու: Պարզ է, որ հրեաների համար կենսականորեն անհրաժեշտ է պահպանել իրենց բացարձակ տիրապետությունը երիտթուրքական խորհուրդներում. նույնպես կարեւոր է պահպանել հակասությունների բոցը թուրքերի եւ հրեաների հակառակորդների՝ հայերի եւ հույների միջեւ:

Հրեաներն ատում են Ռուսաստանին եւ ռուսական կառավարությանը: Այդ պատճառով, Անգլիայի եւ Ռուսաստանի այսօրվա բարեկամությունը զգալիորեն ազդեց այն բանի վրա, որ Թուրքիայում եւ Իրանում հրեաներն անգլիացիների հակառակորդ դարձան: Վստահ եմ, որ գերմանացիները դա լավ են հասկանում: Հրեաները, տնտեսական շահեր ստանալու եւ իրենց իսրայելական իդեալները մի օր իրականացնելու համար՝ կարող են երիտթուրքերին օգնություն ցույց տալ թե՛ իրենց ուղեղով, թե՛ կապիտալ ներդրումներով եւ թե՛ եվրոպական մամուլի վրա իրենց ունեցած հսկայական ազդեցությամբ: Մյուս կողմից, Արեւմուտքի միջին քաղաքացուն կարող է թվալ, որ [երիտթուրքական շարժումը] ազգայնամոլական հունով ընթացող մի շարժում է ու Ասիայի արագ եւ ընդհանուր գրգռման բաղկացուցիչ մի մասը, որը ձգտում է նորից անկախություն նվաճել, այդ մասին բոլորին համար լսելի կերպով հայտարարել եւ ազատվել եվրոպական խնամատարությունից:

Հրեաները երիտթուրքերին դրամական օգնություն են ցույց տալիս, դրա համար էլ իրենց իրավունքներն ունեն նրանց նկատմամբ: Սակայն, այդ իրավունքները պահպանելու համար, նրանք ստիպված են առնվազն ձեւացնել, թե երիտթուրքերի «ազգային» իդեալներն իրականացնելու համար են օգնություն եւ աջակցություն ապահովում՝ նրանց: Դրա համար, նրանց [հրեաներին,- թարգմանիչ] անհրաժեշտ են գաղտնի եւ մաքսանենգային եղա-

նակներ: Արեւելյան հրեան գաղտնի ուժեր գործողության մեջ դնելու մեջ մեծ մասնագետ է. հետեւաբար՝ մայրցամաքային Եվրոպայից եկած ֆրանկմասոնությունը ընտրվեց որպես ամենահուսալի գրավական եւ վարագույր՝ շարժման իսկական դեմքը քողարկելու համար: Ինչպես վերեւում արդեն ասվեց, մասոնության նոր ձեւը Թուրքիայում, իր արտաքին տեսքով, «եղբայրացել է» դեռեւս 50 տարի առաջ Ստամբուլում հիմնված «Բրիտանիա» օթյակի, այսինքն՝ շոտլանդական օթյակների անդամների հետ: Բայց, կարճ ժամանակ անց, «Բրիտանիայի» օթյակներն սկսեցին զգալ, որ իրենք ոչ այլ ինչ, եթե ոչ՝ ֆրանկմասոնական ոգին կորցրած, հիմնականում հրեաների կողմից կառավարվող տեղական օթյակների պատճեններ են դարձել: Արդյունքում, Շոտլանդիայի Մեծ օթյակը նրանց «կեղծ» հայտարարեց, որից հետո անգլիական օթյակը իր դռները փակեց բոլոր նոր մասոնների առաջ, որոնց մեջ էին գտնվում ամենազոր նախարարներ Թալեաթ բեյը եւ Ջավիդ բեյը: Ասում են, որ նրանք հույժ «գազազել էին նման ստորացումից», բայց, իմ կարծիքով, հիմք չկա մտածելու, որ դա մեր նկատմամբ [Օսմանյան կայսրության] նախարարների խորհրդի վերաբերմունքի արմատական փոփոխությունների կարող է առաջնորդել...

«Ժեոն թուրք»[36] թերթը, որը Ստամբուլի մյուս հրատարակությունների նման, լույս է տեսնում հրեաների ֆինանսական աջակցությամբ[37], ժամանակ առ ժամանակ ծայրահեղ հակաանգլիա-

[36] Ժեոն թուրք.- Ֆրանսերեն երիտասարդ թուրք:

[37] Այսօր եւս թուրքական հիմնական պարբերականները (օրինակ ազդեցիկ «Միլլիյեթ» եւ «Յուրրիյեթ» օրաթերթերը) լույս են տեսնում դեոնմեհրեական եւ զուտ հրեական ֆինանսավորումով:

կան հոդվածներ է հրապարակում: Նման հոդվածներից մեկի հեղինակը՝ կրետեցի մի երիտասարդ՝ Ջելալ Նուրի անունով, որդին կոմիտեական ծերակուտական Նուրի բեյի, ինքը կոմիտեի անդամ է: Մեկ ուրիշ հեղինակ՝ Սեյֆեդդին Տ. Գաստոուդը, լեհ դեռնմեհրեա է: Գաստոուդը մի ժամանակ ֆինանսական փոխհարաբերություններ ուներ գերմանացի հրեա Օպենհեյմի հետ: Տ. Գաստոուդը վերջերս Ստամբուլում (Հուսեյն Հասիպ անունով մի եգիպտացու հետ համատեղ) սկսեց հրատարակել «Ժողովրդական դատարան» («Քյուրսի-ի-միլլեթ», «Լա Տրիբյուն դյու պեոպլը») թուրքերեն եւ ֆրանսերեն լեզուներով թերթը, որը պանիսլամիզմի գաղափարական օրգանն է: Այդ հրատարակության նպատակը, ինչպես բացեիբաց հայտարարվեց, Հնդկաստանում, Եգիպտոսում, Ռուսաստանում, Թունիսում, Ալժիրում եւ այլուր ապրող միլիոնավոր հավատակից, ճնշված եղբայրների մեջ երիտասարդ Թուրքիայի մուսուլմանների հետ համերաշխության զգացողություն արթնացնելն ու տարածելն է: Թերթն ընդգծում է, որ եվրոպական քաղաքականությունն ուղղված է ասիացիների եւ մուսուլմանության դեմ եւ թե թուրքերը պետք չէ իրենց հույսերը կապեն եվրոպացու խաբուսիկ բարեկամության հետ: Անգլիայի մասին կրկնվում են Սիմեդ Ռիզա

բեյի[38] խոսքերը. «Օսմանյան կայսրության տրոհումը կուժեղացնի եւ կամրապնդի Անգլիայի դիրքերը Եգիպտոսում եւ Արաբիայում»:

Ինչպիսի՞ք են Թուրքիայի հնարավոր միտումները ներկա դրության մեջ: Ահա՛ նրա քաղաքացիական ներկայացուցիչները. հեռագրակապի՝ ամիսը երեք լիրա աշխատավարձով նախկին ծառայող Թալեաթ բեյը, դպրոցի՝ տասը լիրա աշխատավարձով նախկին ուսմասվար, ներկայիս ֆինանսների նախարար Ջավիդ բեյը, «Թանին» թերթի հրատարակիչ, պատգամավոր Հուսեյն Ջավիդ բեյը, որը ժամանակին մեկ էջը չորս գրոշով վեպեր էր թարգմանում Աբդուլ Համիդի համար.. Բնական է, որ նրանց առաջին ձգտումը ուրիշներին իրենց մակարդակին իջեցնելն էր: Եվ հիմա էլ է այդպես: 30 միլիոնանոց կայսրության մեջ թուրքերը շուրջ 6 միլիոն են կազմում: Սահմանադրական ներկա համակարգի պայմաններում, որը մյուսների համար թույլ է տալիս որոշակի արդարություն եւ ազատություն, նրանք (թուրքերը) կուլ են գնալու, մանավանդ որ մեծամասնությանը (արաբներին, հույներին, բուլղարներին եւ մյուսներին) զիջում են ըստ իմացականության, ըստ կրթության եւ ըստ գործարար հատկանիշների:

[38] Սիմեդ Ռիզա.- Երիտթուրքական շարժման հիմնադիր ու գաղափարախոս: Եղել է բարձրաստիճան մասոն: Փարիզում վտարանդիության մեջ հրատարակել է «Մեշվերեթ» (թուրքերեն՝ «Խորհուրդներ») թերթը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո, վերադարձել է Ստամբուլ եւ ընտրվել Օսմանյան կայսրության խորհրդարանի ստորին պալատի (Մեջլիս մեբուսան) նախագահ:

Մայրաքաղաքն ու խորհրդարանը նրանք իրենց ձեռքում պահում են ռազմական օրենքով: Հայերին հանգստացրեցին Ադանայի կոտորածով (1909թ.)[39], հույներին ստիպեցին լռել ահաբեկչության միջոցով, բուլղարական քաղաքական կյանքին վերջ դրեցին՝ նրանց ծառայություններն ու ընկերությունները փակելով: Այդ բոլորն արվեց «անսանձ» քրիստոնյաների դեմ: Հիմա թուրքական բանակը հանգստացնում է ըմբոստ ալբանացի մուսուլմաններին, եւ, ըստ երեւույթին, նույնը սպասում է նաեւ քրդերին ու արաբներին: Քանի որ թուրք տարրը չի փայլում իմացական եւ գործարար որակներով, բնազդը նրանց ստիպում է ցույց տալ իրենց գերակայությունը ռազմական ուժով:

Սակայն, այս ամենը կախված են եվրոպացի, հիմնականում հրեա ֆինանսավորողներից, որոնք նրանց հատկացնում են բանակը պահելու համար անհրաժեշտ գումարները, ինչը դեմ կանգնած է տնտեսական զարգացման փաստացի իրադրության: Թուրքիայի ներկայիս սահմանադրական կառավարությունը պարզապես խաբկանք է, եւ, ապագային նայելով, անլուծելի հարց է թվում, թե ինչպե՞ս կարող են թուրքերը ներկայի սահմանադրական վարչակարգով պահպանելու իրենց իշխանությունը՝ չհենվելով ռազմական ուժի վրա:

[39] Բրիտանացի դիվանագետը շատ հստակ գրում է, որ Կիլիկիայի եւ հյուսիս-արեւմտյան Սիրիայի հայերի 1909թ. կոտորածները կազմակերպել են իթթիհադականները, այսինքն՝ հրեաները, դեոնմե-հրեաները եւ թուրքերը: 30 հազար հայոց այս կոտորածից հետո էլ հայ ղեկավարները, մասնավորաբար մասոնները, շարունակեցին սիրախաղը երիտթուրք-մասոն-սիոն եռամիասնության հետ, որը հայությունը հատուցեց աննախընթաց ցեղասպանությամբ եւ Հայրենիքի մեծագույն մասի կորստով...

...Երիտթուրքերն իրենց համարում են զարթնող Ասիայի առաջնորդներ եւ մասնավորաբար իրենց պարտքն են համարում պաշտպանել Իրանում ծնվող ազատությունները, որոնք, նրանց խոսքերով, ներկայիս վտանգի տակ են Անգլիայի եւ Ռուսաստանի կողմից տարվող տիրապետության մենիշխանական քաղաքականության պատճառով: Դրա հետեւանքն են նրանց ընդհատակյա կապերը Արեւմտյան Ադրբեջանի[40] եւ երիտիրանական կոմիտեների, ինչպես նաեւ նրանց [երիտթուրքերի,- թարգմանիչ] կովկասյան հեղափոխականների հետ համատեղ արկածախնդրական քաղաքականությունը Իրանում գերմանական միջամտության դեմ: Նրանք նաեւ կապեր են հաստատել Ռուսաստանում ապրող հրեա եւ հայ-դաշնակցական ծայրահեղ հեղափոխականների հետ[41]: Թիկունք կանգնելով դժգոհության տրամադրություններին եւ ներքին փոփոխություններ պահանջող հոսանքներին՝ նրանք [երիտթուրքերը,- թարգմանիչ] ձգտում են թուլացնել Ռուսաստանը, այն անվտանգ դարձնել իրենց համար...

[40] Պատմական Պարսկահայք նահանգը, ներկայումս՝ Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիս-արեւմուտքում:

[41] ՀՅԴաշնակցություն-Միություն եւ առաջադիմություն կուսակցությունների հարաբերությունների մասին թեեւ հայտնի է, սակայն դրանք քիչ են ուսումնասիրված: Ռուսաստանի եւ այլ երկրների հրեական-սիոնական «հեղափոխականների» եւ շրջանակների հետ ՀՅԴաշնակցության կապերը առ այսօր շատ մութ են մնում եւ դեռեւս ուսումնասիրված չեն, թեեւ, ցանկության դեպքում, կարելի է այդ հարաբերությունների վրա լույս սփռող բավարար նյութեր գտնել տարբեր աղբյուրներում:

«ՀԱՅԵՐՆ ԱՆՏԱՆԵԼԻ ԵՆ»

(հատվածներ Արաբիայի Լոուրենսի հետ Լինկոլն Սթեֆընսի հարցազրույցից)

Ծանոթ. խմբ.-

1.- Թոմաս Էդուարդ Լոուրենս (1888-1935, մականունը՝ Արաբիայի Լոուրենս).- արեւելագետ, Մեծն Բրիտանիայի Ինտելիջընս սերվիս կոչվող գաղտնի սպասարկության գործակալ: կազմակերպել եւ ուղղորդել է արաբների 1916-1918թթ. ապստամբությունը թուրքերի դեմ:

2.- Հաստագրուած եւ տարածությունով իրարից բաժանված բազմակետերը մեր կողմից են՝ նշելու համար կրճատված հատվածները: Մյուս բազմակետերը բնագրին են: Հաստագրումները, բացի մեկից, մերն են:

«. . . Եվ կարծում էի, որ ինքս էի վարում խոսակցության ընթացքը: Հետո միայն կռահեցի, մի տեսակ ցնցվելով, որ նա էլ մի նպատակ էր ունեցել, եւ որ իր նպատակն էր բրիտանական պրոպագանդայով լցնել իմ ուղեղը հայերի վրա ամերիկյան մանդատ հաստատելու վերաբերյալ: Ահա այդ էր, որ կռահեցի: Ուրիշ բաներ էլ, բայց ես շշմել էի եւ բավական նվաստացած էի զգում գտնելով, որ հատուկ պատճառներ ունեի . . . , թե ինչո՞ւ մենք՝ ամերիկացիներս պետք է աշխարհի մյուս կեսը գնանք հայերին հոգալու եւ ոչ միայն նրանց փրկելու թուրքերից, հույներից, ֆրանսիացիներից, իտալացիներից, բրիտանացիներից եւ հենց իրենցից էլ, այլեւ, մի տեսակ, ինքներս էլ մեզնից եւ նրանցից փրկելու:

Նա ասաց, օրինակ, որ հայերը «մարդկային անտանելիության վերջնական խոսքն են»: Որպես ցեղ՝ ակադեմիկ բանավեճում նրանք համանման են «վերջին մարդուն»:

. . . [Լոուրենսը գտնում էր,] թե մենք՝ ամերիկացիներս չափից ավելի գաղափարապաշտ ենք: Եվ գտնում էր, որ հայերը չափից ավելի գործնական են: Ուստի մեկս մյուսին կարող ենք շտկել, մենք բուժիչ ենք նրանց համար, նրանք՝ մեզ համար: Երկուսս էլ հուսահատական ենք, մանավանդ հայերը:

Ես այնպես եզրակացրի, որ նա մի անասելի համակրանք ունի հայերի հանդեպ, կամ էլ, ավելի ճիշտ այսպես ասեմ՝ նրանց վերաբերյալ ունի մի այնպիսի իմացություն կամ փորձառություն, որ նրան թույլ է տալիս մարդկայնորեն հասկանալ թուրքերին (եւ հայերի բոլոր մերձավոր հարեւաններին), որոնք մշտապես ջանում են ոչնչացնել այս որբ ցեղը: Կարծես թե նրա միտքն այն էր, որ դա հայերի հանդեպ անելիք միակ բանն է: Ուղղակի այդպես չասաց: . . . Ուստի նա չասաց, թե հայերը պետք է բոլորովին ոչնչացվեն: Պարզապես՝ իմ մեջ այն տպավորությունն ստեղծեց այն ժամանակ, թե դա է Հայկական հարցի միակ լուծումը, եւ թե այդ պատճառով էր ցանկանում, որ ամերիկացիներս մեր վրա վերցնենք այդ գործը:

Նա այնպես էր համարում, կամ ինձ ստիպում էր համարել, թե թուրքերը չպետք է անեն այդ գործը, նրանք չափազանց կոպտորեն պատրաստ են դրան, եւ քրիստոնյա չեն: Ոչ էլ հույները, սրանք էլ շատ են հաճույք զգում դրանից եւ արդյունավետ չեն, երբեք որեւէ բան մինչեւ վերջ չեն հասցնում, եւ երբ հայերին սպանելու իրենց գեղագիտական հաճույքը հագենա, ձեռք կքաշեն: Այդպես էլ հին, ոսոխ ցեղերը: Նրանք դադարեցնում են գործը նախքան բոլոր

հայերը մեռած լինեն: Նույնիսկ երբ բոլորը միասին էին գնում խնդիրը կատարելու, միշտ էլ թողնում էին մի զույգ այստեղ, մի զույգ այնտեղ՝ Ադամ ու Եվաներ, որոնք, հենց որ մեկը կռնակ դարձներ նրանց, բազմանում ու բազմանում ու բազմանում էին, այնպես որ հաջորդ անգամ Հայաստան այցելողը կրկին հայեր կտեսներ այնտեղ, միլիոնավոր ու միլիոնավոր հայեր, բոլորը հեզ ու համեստ, բայց ցերեկը գործով զբաղված, իսկ գիշերը գաղտնորեն բազմանալով ու կամացուկ տարածվելով ու տարածվելով եւ...

Նա իմ վրա ոտից գլուխ տարածեց իր մալթուսական* հուսահատությունը եւ մի այնպիսի սարսափ հայերից, որ քիչ մնաց կուլ տայի իր ամբողջ որոգայթը ամերիկա-հայկական մանդատի վերաբերյալ, երբ իմ փրկարար ամերիկյան հումորը շունչս տեղը բերեց:

- Բայց ինչո՞ւ բրիտանացիներն էլ չանեն այս գործը,- հարցրի . . .

* Թոմաս Մալթուս (1766-1834).- Անգլիացի տնտեսագետ, իր անունով կոչված մարդատյաց տնտեսագիտական տեսության հիմնադիրն ու գաղափարախոսը: Ըստ մալթուսականների՝ Երկրագնդի բնակչությունն աճում է երկրաչափական, իսկ գոյամիջոցները՝ թվաբանական պրոգրեսիայով: Այս անհամապատասխանությունն առաջացնում է «ավելորդ բնակչություն», որից հարկավոր է ազատվել. նրանք կա՛մ պետք է չծնվեն, կա՛մ պետք է ոչնչացվեն պատերազմների, սովի եւ համաճարակների միջոցով: Նորմալթուսականության հիմնական գաղափարը հայտնի է «Ոսկե միլիարդի տեսություն» անունով, ըստ որի՝ Երկրագնդի պաշարները բավարար են արժանավայել կյանքով ապահովելու միայն մեկ միլիարդ մարդու (այսպես կոչված զարգացած երկրների բնակիչներին). մնացյալներն ավելորդ են:

- Հայերի լիակատար կոտորածը,- պատճառաբանեց,- կարող է խայտառակություն դառնալ, եթե բրիտանացիներն անեն . . . Բրիտանական կայսրությունը համաշխարհային կառավարման սկիզբն է: Մեր բոլոր մեծ խնդիրները՝ պատերազմներ, հեղափոխություններ, գործադուլներ, համաճարակներ եւ այլն, սկսում են այն իրողությունից, որ Երկրագունդն իր ամբողջությանը մեջ չի կառավարվում որպես մի ամբողջություն: Բրիտանացիք մի օր վերջ են դնելու այս անիշխանությանը: Սակայն կայսրությունը դեռ մանուկ է, հարաբերաբար փոքր, թույլ եւ գերբեռնավորված: Մտածել թե կղզիները, գաղութները, ռազմավարական կետերը, ծովերն ու առեւտրի ուղիները, այս բոլորը գերմանական կայսերապաշտության պարտությամբ Բրիտանական կայսրության ուսին ինկող նոր բեռներ ու պարտավորություններ են: Ոչ: Միառժամանակ պետք է խնայել կայսրությանը:

Բացի այդ,- հարեց նա,- բրիտանական կայսերապաշտությունը, այս փուլում, շահագրգռված է ավելի բնական հարստություններով, քան ժողովուրդներով որպես այդպիսիք:

...Պարզապես սպասեց [Լոուրենսը] ինչքան կարող էր, ապա ինձ հիշեցրեց, որ լսած կլինեմ, ինչպես, ասաց, ինքն էլ է լսել, թե Հայաստանը պետք է բաժանման ենթարկվի: Բուն երկիրը, ուր բնական հարստություններն են, պետք է անջատվի առաջամասից, ուր ոչինչ չկա, բացի հայերից: Ամերիկյան մանդատը լոկ պետք է հայերի վրա լինի: Մի ուրիշ դաշնակից, ոչ թե բրիտանացիք, այլ մի ուրիշ հավասարաչափ գործնական տերություն, պետք է ստանա Հայաստանը:

- Բայց,- առարկեցի ես,- ի՞նչ օգուտ մի երկրի բնական հարստություններից առանց այն ժողովրդի, որ պետք է մշակի դրանք:

Հանքեր, նավթի պաշարներ, բերրի հողեր, մի խոսքով՝ բնական հարստությունները,- համբերությամբ բացատրեցի նրան,- ոչ մի օգուտ չեն տա կապիտալին առանց այն աշխատուժի, որ պետք է փորի ու զարգացնի դրանք: Եվ մի երկրի բնիկները բնական աշխատուժ են դրա համար, ամենաէժանը, ամենահնազանդը, ամենաքիչ կազմակերպվածը, լավագույնը:

. . . - Ես կոչ եմ անում,- գոչեցի,- ոչ թե գաղափարապաշտորեն, ոչ թե «Հայաստանը հայերի համար», այլ գործնականորեն՝ «Հայերը Հայաստանի համար»:

. . . Սկսեցի մտածել, որ ինչ որ սխալ էր գտնում իմ մեջ կամ մեր մեջ: Գուցե ես շատ էի թեքվել գործնականության կողմը: Հիշեցի, որ ինչպես նա հայերին կշտամբում էր դրա համար: Ուստի դարձ կատարեցի: Ավելի գաղափարապաշտորեն եւ, հուսով եմ, հայրենասիրաբար խոսեցի կրկին.

- Եթե ամերիկացիներս հանձն առնենք հայերին,- հայտարարեցի,- նրանց իսկ օգտի համար կանենք այդ բանը: Նրանց կկառավարենք միշտ էլ այն գաղափարով, որ նրանց ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու:

- Այո՛, այո՛, մենք հասկանում ենք այդ բոլորը,- ասաց նա: Բայց զգացի, որ չի հասկանում, ուստի ուղղակի շարունակեցի իմ սիլլոգիզմը:

- Լավ ուրեմն,- ասացի պատշաճորեն,- պետք է դրանում տեսնեք նաեւ հենց այդ նպատակը. որպեսզի հայերին ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու, պետք է աշխատեցնենք նրանց: Ու քանի որ չես կարող մի ժողովուրդ աշխատեցնել առանց մի այնպիսի բանի, որի վրա աշխատեցնես, մենք (...) Հայաստանը: Ո՛չ թե հարստությունները կորզել նրանցից, այլ օգտագործել որ-

պես ուսումնադաշտ, ուր ժողովրդին սովորեցնել աշխատասիրություն, խնայասիրություն եւ բոլոր այն քրիստոնեական առաքինությունները, որոնք ծառայում են լավ մարդիկ եւ լավ քաղաքացիներ դաստիարակելու:

Շփոթահար, ուռած տեսք էր ընդունել նա: Չգիտեի ինչ է պատահել նրան, մինչեւ որ վերջապես որոշեց արտահայտվել:

- Խնայասիրությունը չի պակասում հայերին,- ասաց նա չոր,- եւ անշուշտ գիտեք, որ քրիստոնյաներ են նրանք, երդվյալ քրիստոնյաներ:

Ի հարկե գիտեի: Պարզապես, ոգեւորությանս մեջ, մի պահ մոռացել էի այդ բանը: Համենայն դեպս նա ինձ բռնել էր այդ կետում, ուստի վերադարձա աշխատանքի հարցին եւ պնդեցի, ու պնդում եմ, այդ հարցը:

- Բայց,- ասացի,- հայերը պետք է աշխատեն: Դա է հաջողության գաղտնիքը, լինի անհատի, լինի ազգի համար՝ աշխատանք, համառ, եռանդուն աշխատանք: Եվ հայերը պետք է ունենան Հայաստանը՝ դրա վրա աշխատելու համար:

- Հայերը չեն աշխատելու,- ասաց նա: - Դա է ցավոտ կետը ձեր ծրագրում, դա է հայերի էլ ցավոտ կետը: Ճիշտն ասած, դա է ցավոտ կետը բոլոր այս հին ցեղերի, որոնք եղել են քաղաքակիրթ, սովորել են խաղը եւ, մի ժամանակ տիրած լինելով աշխարհին եւ աշխատեցրած, կորցրել են իշխանությունը, ետ են մնացել, ինչպես դուք ասում եք: Կամ էլ, ինչպես ես եմ ասում, շարունակել են, առաջ են գնացել տրամաբանականորեն, հոգեբանորեն, բնախոսականորեն: Նրանք չեն սիրում համառ, եռանդուն աշխատել: Դա է, որ նրանց տարբերում է այն երեխայանման, իսկապես հետամնաց, ժողովուրդներից, որոնց հետ գործ եք ունեցել ամերիկացի-

ներդ: Նախնական ժողովուրդները պարզապես ծույլ են: Նրանց կարելի է ստիպել առաջ գնալ, աշխատեցնել, զարգացնել, շահագործել, եթե ուզում եք:

... Նրանք զբաղված են գնել-ծախելով, ու սերված լինելով գնող-ծախողներից, առեւտրական մրցակցության բազում սերունդների միջով ընտրասերված, նրանք լավ գնող-ծախողներ են: Կարող են գնալ աշխարհում որեւէ տեղ առեւտուր անելու: Ոչ թե կազմակերպելու, կառուցելու, ծրագրելու եւ աշխատելու:

. . . Իմ այս հին ժողովուրդները,- ասաց,- կգնան որեւէ տեղ, ուր աշխատավորներ կա աշխատեցնելու, խորամանկորեն կխիզախեն, հեզորեն տառապելով, դրամ խնայելով, գործ անելով: Այո՛, նրանք գործ են անում: Այնպես են գործ անում, որ աշխատավորն այդպես չի աշխատի: Այնպես են գործ անում, ինչպես գործարարը միայն կանի՝ հարատեւորեն, համառորեն, մնալով հենց միայն շահի նեղ լուսանցքում: Բայց,- շեշտեց նա,- չեն աշխատի նրանք: Չեն կարող: Չեն կարող հասկանալ «աշխատավարձի համար աշխատելու» դրույթը: Դա բնազդ է նրանց մեջ, մի գիծ, մի ուշիմություն, որ զարգացել է հաջողված ընտրասերումով, ինչպես որսորդության ուրույն գծեր ենք զարգացնում որսկան շների այս կամ այն ցեղի մեջ: Նրանք իրենց արյան մեջ իսկ գիտեն, որ աշխատավարձով, նույնիսկ բարձր աշխատավարձով աշխատելն անօգուտ է, եթե ուզում ես հաջողության հասնել ու հարստանալ: . . . Իսկ դուրս գալ ու ճակատի քրտինքով արդյունահանել երկրի հումքը եւ մշակելով վերածել շուկայական ապրանքների՝ ոչ: Հին ժողովուրդները չեն հանդուրժում անել այդ բանը, իսկ ինչ վերաբերում է ձեր հայերին՝ նրանք պարզապես չեն անի:

Լռեց մի պահ, դիտելով ինձ . . .

- Հայերը,- ասաց,- ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից:

Ես կրկին տվի իմ թեկնածուի անունը:

- Հրեանե՞րը,- արձագանգեց: - Առաջ էլ ասացիք նրանց մասին, եւ ես գոհ զգացի: Դա ցույց տվեց, որ գեթ մի նշույլ ընկալում եք հին ցեղերի մասին իմ ասել ուզածից: Քիչ ճամփաներ անցած մարդու համար հրեաներն ամենածանոթ օրինակն են հին, խորաթափանց, խելացի ժողովրդի, եւ այո՛, նրանք բնազդորեն շահագործողներ են: Նրանք աչք են դնում գործածված հարստության վրա: Բայց կաշխատեն նրանք: Չեն հանդուրժում, բայց կարելի է նրանց ախատեցնել: Եվ ավելի վատ, որ նրանք ստեղծագործող էլ են, հնարամիտ, ու զգացմունքային (սենտիմենտալ): Նրանց մեջ դեռ կան արվեստագետներ, փիլիսոփաներ, մարգարեներ: Անկատար են նրանք: Քաղաքակրթության անավարտ մի արդյունքն են, Կիսատ մնացած: . . . Բայց անհեթեթ է նրանց նույն ոգով դասել այն հին ժողովուրդների հետ, որոնց մասին խոսում եմ: Չէ՞ որ իմ հին ցեղերն իրենց երկրից դուրս են քշել ձեր այդ հրեաներին կամ չեն թողել, որ գործ անեն իրենց մոտ: . . . Մեր շոտլանդացիները ողջ-ողջ քերթում են նրանց: Այդպես են անում արաբներն էլ, թուրքերը, հույները, իսկ ինչ վերաբերում է հայերին...

Շունչ քաշելով շարունակեց.

- **Հրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում:** Այդպես զգում են հույները, թուրքերը, բոլոր այն մյուս ցեղերը, որոնց գլխին են եղել հայերը երբեւիցե: Զգում են, որ հայերը բոլորին էլ աշխատանքի կլծեին: Ու կլծեն: Հայերն ունեն հրեանե-

րի բոլոր հատկանիշները, առավել՝ բոլոր մյուս ցեղերի էլ բոլոր հատկանիշները, եւ բացի այդ՝ քրիստոնյաներ են:

...- Հայերը,- ասաց,- **չպետք է ունենան Հայաստանը, բուն երկիրը**: Իրենք չեն աշխատի, որ մշակեն երկիրը, ո՛չ իսկ հոգուտ իրենց: Ուզում են այդ հողերը, այո՛, բայց միայն տերը լինելու համար: Նույնիսկ զարգացման գործը կազմակերպելու համար չեն աշխատի նրանք: Արտոնությամբ վարձու կտան ուրիշներին՝ գործը վարելու: Նրանք ուզում են ապրել ծովեզրին, քաղաքներում, ի հաշիվ ստացած վարձի, շահույթի, շահաբաժինների, արժեթղթեր առնել-ծախելով ձեռք բերված շահի եւ դրամագլխով ու աշխատուժի կիրառմամբ վաստակված դրամի:

- Շատ մարդիկ կան այդպես: Միայն հայերը չեն:

- Տեսնում եմ, որ դուք դեռ չեք ըմբռնում բուն խնդիրը,- ասաց նա: Իրոք, ուրիշներ էլ կան, որ կուզենային այդպես անել: . . . Նույնիսկ ձեր հրեաները ծախսող են, սքանչելի ծախսող: Բայց մեր այդ հայերը ոչինչ չեն անի ու չեն էլ ծախսի: Ձեռք են բերում ու խնայում: Վաճառում են, բայց միայն կրկին գնելու եւ ավելի ու ավելի ձեռք բերելու համար: Դարերով էվոլյուցիա է պետք՝ իսկական առեւտրական ոգու այդպիսի կատարելություն զարգացնելու համար, իսկ էվոլյուցիան աստիճան առ աստիճան զարգացման խնդիր է: Ու հայերն ամենաբարձր աստիճանին են հասել: Ասում եմ ձեզ, որ **եթե հայերին առիթ տրվի մի կարգին թռիչք առնելու աշխարհում**, եւ նրանք ազատ իշխանություն ձեռք բերեն երկրագնդի որեւէ անկյունում, **ամբողջ մոլորակի տերը կդառնան եւ կաշխատեցնեն ամբողջ մնացյալ մարդկությանը**: Այդ է, որ գիտեն թուրքերը եւ սարսափում են, եւ հույներն էլ եւ ... մենք բոլորս, որ գիտենք նրանց: Ուրեմն...

- Ուրեմն...,- ասացի:

- Ուրեմն ... պետք է բաժանենք նրանց՝ Հայաստանի վրա մի մանդատ, հայերի վրա ուրիշ մանդատ:

- Ուրեմն,- դիմադարձեցի ես,- դուք ուզում եք, որ Հայաստանը տրվի ձեր մի դաշնակցին, բրիտանական կապիտալի մի գործակցին, իսկ հայերը տրվեն մեզ՝ ամերիկացիներիս: Շատ լավ: Երկու հարց է ծագում: Ձեր դաշնակիցը ի՞նչ կարող է անել Հայաստանում առանց աշխատուժի: Ու վերջապես ի՞նչ կարող ենք անել ամերիկացիներս հայերի հետ առանց Հայաստանի:

- Օ~,- ասաց,- ուրիշ ժողովուրդներ կան Բալկաններում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում եւ Աֆրիկայում, հետամնաց ազգեր, իսկապես հետամնաց, ազգեր, որոնք աշխատուժ կարող են լինել: Նրանց կարելի է բերել Հայաստան եւ աշխատանքի լծել: Աշխատուժի պակաս չկա:

- Ուրեմն դա կլուծի բրիտանական, գործնական խնդիրը,- ասացի: Գանք իդեալիստական, ամերիկյան խնդրին: Ի՞նչ պետք է անենք հայերի հետ:

Չէր ուզում ասել: Իր բրիտանական հումորը կամ իր դիվանագիտական զգուշավորությունը եւ կամ չգիտեմ ինչը չէր թողնում նրան ասել: Խուսափելով, խոսեց այն մասին, թե ասիական աշխատուժի ու եվրոպական կապիտալի համար վտանգավոր է հայերի ներկայությունը որեւէ այնպիսի վայրի մոտ, ուր հանքեր ու հողեր են մշակվում:

- Ուրեմն,- ասացի ես,- ոչ առանց մի քիչ ամերիկյան հումորի: - Ուրեմն...

... - Դուք չեք գիտակցում,- եզրակացրեց նա,- թե որքան դժվար ու նրբին խնդիր է մի տարօրինակ, մի օտար ժողովուրդ կառավարելը:

... Պնդեցի, որ մենք էլ մեր դժվար գործն ենք արել...: Բայց պատահեց, որ հիշատակեցի նաեւ մեր սեփական բնիկներին՝ ամերիկյան հնդկացիներին:

Հենց դրա վրա էլ նա ուղղակի վեր թռավ.

- Այդ է ահա,- գոչեց: - Այդ էր իմ մտքում ամբողջ ժամանակ: Ձեր հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականությունը այն է, ինչ պետք է հայերի հանդեպ:

Անակնկալի եկա, շշմեցի: Հարցրի, թե իր կարծիքով ի՞նչ է եղել մեր քաղաքականությունը հնդկացիների հանդեպ, եւ նա ասաց, թե իր հասկացածով՝ մենք ոչնչացրել ենք նրանց բոլորին էլ ... բոլորին: Այնպես չէ՞:

Ես նայեցի նրան ոտից գլուխ, ինչպես ինքն էր ինձ նայել մի քանի անգամ: Ու հաճույքով այդպես նայեցի:

- Այդպես ուրեմն,- ասացի մի երկար դադարից հետո,- ուրեմն դուք մտածում եք՝ այդ է, որ պետք է հայերին անենք մինչեւ այստեղ գալը... Պետք է ոչնչացնենք նրանց բոլորին էլ, գլխովին:

- Ոչ, ոչ, ոչ,- ուղղեց նա: - Ինչպե՞ս եք դուք՝ լրագրողներդ սխալ հասկանում եւ սխալ մեջբերում:

Բոլորովին էլ չէր ուզում ասել, թե մենք պետք է կոտորածն ընդունենք որպես քաղաքականություն: Գիտեր, որ չենք անի, չենք կարող անել դա:

Դե լավ, ի՞նչ էր ուզում ասել, ուրեմն: Ի՞նչ պետք է անենք: Հասաց: . . . Պետք է ինքս ասեի իր ասել ուզածը, երեւի ա՞յդ էր ճիշտը: Հուղղեց ինձ:

Որոշակիորեն ու հստակորեն չէր ուզում ասել, թե մենք պետք է գիտակցորեն ու մտածված կերպով գնանք բնաջնջելու հայերին: Բոլորովին ոչ: Պարզապես հույս ուներ կամ հավատում էր, որ ուրիշ ամեն ինչ փորձելուց հետո՝ մենք պետք է հարցը **վերջացընենք** [հաստագրումը բնագրինն է,- խմբ.] այդ Բանն անելով: Չթողնելով ոչ մի Ադամ ու Եվա, որ շարունակեն Կայեն աճեցնել... - Բայց դա խայտառակություն չէ՞ր լինի,- ասացի:

Կարծում էր՝ ոչ:

. . . - Հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականության մեջ խայտառակություն չկար, այնպես չէ՞,- հարցրեց: - Ու երբեք էլ չեք դադարել մտածելուց, թե ձեր արածը ճիշտ էր, այո՞:

. . . Ես կարծում եմ, որ դուք՝ ամերիկացիներդ, կարող եք որեւէ բան անել ու տարակուսանքի չենթարկվել ոչ աշխարհի, ոչ էլ ինքներդ ձեր կողմից: Մի սքանչելի բան կա դրա մեջ, շատ սքանչելի, աշխարհի համար օգտակար մի բան: Դա թույլ է տալիս մտածելու, որ ամերիկացիներդ բուն Հայաստանում կարող էիք հիմնավորապես անել ու վստահաբար կանեիք այն, ինչ պետք է արվի այնտեղ: Կանեիք աստիճանաբար, բայց կատարելապես, առանց բաց թողնելու որեւէ մի առանձին կամ, ավելի ճիշտ, ամուսնացած հայի, եւ այդ ամբողջը առանց խայտառակության, առանց նվազագույնս խախտելու ձեր այն հավատքը, թե դուք ... ինչպե՞ս ասեմ ... Դե՛հ, դուք նման չեք մեզ՝ անգլիացիներիս կամ ֆրանսիացիներին, գերմանացիներին, թուրքերին եւ, վախենամ, դույզն իսկ նման չեք հայերին էլ: Եվ,- շտապեց ավելացնել նա,- պետք է որեւէ մեկը լուծի Հայկական հարցը: Ինձ թվում է բանաստեղծական արդարություն կլինի, լավ քաղաքականություն եւ հաստատ գործ, որ աշ-

խարհում ամենաիդեալիստ ժողովուրդը իր վրա վերցնի աշխարհի ամենագործնական ժողովրդին:

. . . - Ինչպես հասկանում եմ,- ասացի,- ամերիկացիներս առեւտրական մշակույթ ենք, ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել:

Նա գլխով արեց: Ես շարունակեցի.

- Նրանք մտածում էին, որ զարգացնում են գործարարությունը, երբ իրականում զարգացնում էին մարդկային ցեղի մի որոշ տեսակ՝ մի ուրույն ցեղ գործարար մարդկանց, որ կախյալ են ուրիշների արտադրողական աշխատանքից, ուրիշների, որոնց նրանք չեն կառավարում հիմա, եւ որոնք ատում են նրանց, որովհետեւ նրանք կարող են որեւէ մեկին մատի վրա խաղացնել առեւտրի մեջ եւ ապրում են առանց աշխատելու, ստախոսներ են, չարաշահողներ, մակաբույծներ, ամենագործնական ուղեղով եւ ամենաքրիստոնեական իդեալներով ու վարվելակերպով:

. . . Եթե ամերիկացիներս կարողանայինք այժմ, մեր ներկա դրությամբ, այս տեսակ մարդու զարգացման նախնական փուլում, եթե կարողանայինք, կառավարելով հայերին, մոտիկից տեսնել մեր մշակույթի կիրառման գործնական ձեւերն ու արդյունքները, եթե կարողանայինք հասկանալ, որ այն, ինչ ստուգում ու քննում ենք ներկա հայի մեջ, ապագա ամերիկացին է...

- Վաղվա,- շտկեց նա:

- Ապա ուրեմն,- շարունակեցի ես,- գուցե հուսախաբ լինեինք հայերից, գուցե, ջղայնացած, ոչնչացնեինք նրանց բոլորին...

- Ահա՛, ահա՛:

- Գուցե ոչնչացնեինք բոլոր հայերին, բայց պիտի տուն գնայինք...

- Հեռագրեիք,- հուշեց նա,- ավելի արագ է դա:

- Հեռագրեինք տուն,- ընդունեցի փորձի համար,- հեռագրեինք զգույշ լինելու մի ահազանգ. «Զգուշացե՛ք գործնական գործարարության խաչաձեւումից քրիստոնեական իդեալիզմի հետ»: Չափից շատ գործարարությունը եւ չափից շատ իդեալիզմը կարող են վնասել այս երկու լավ բաներին ու մեզ էլ՝ որպես ժողովրդի:

- Ահա՛, ահա՛,- բացականչեց:

- Դա կարող էր մեծ, հարուստ Ամերիկան վերածել մի Հայաստանի, որը բրիտանացիներն ու ռուսները (ապագայի) պիտի «անհրաժեշտ» գտնեին վերցնելու որպես մանդատային՝ երկու մասի բաժանված, մեկը՝ բուն իսկ Միացյալ Նահանգները, Անգլիայի համար, մյուսը՝ ամերիկյան ժողովուրդը՝ Ռուսաստանի համար:

. . . - Հավատո՞ւմ եք իրոք, որ հայերին կառավարող որեւէ ամերիկացի բավական գիտակից կլինի տեսնելու համար, որ հայերը նման են ամերիկացիներին:

- Դուք անգլիացիներդ տեսնում եք,- կտրուկ նետեցի երեսին:

- Ճիշտ է,- համաձայնեց նա մտածկոտ: - Մենք տեսնում ենք հայերի նշանակությունը ամերիկացիների համար, մենք՝ կայսերապաշտ անգլիացիներս տեսնում ենք դա: Բայց վստահ չեմ ու մտածում եմ, կարելի՞ է արդյոք մեր այսպես կոչված բարձր դասի դժգոհներին բերել այն գիտակցության, որ կանխատեսեն իրենց ճակատագիրը այն հին ազգերի ճակատագրի մեջ, որոնց կառավարում են:

Ես պարտվել էի, անօգնական, շշմած: Բարեբախտաբար նա չտեսավ իմ վիճակը: Աչքերը խոնարհվել էին: Վեր կացավ, բայց խոր մտածմունքի մեջ էր, երբ ինձ առաջնորդում էր դեպի դուռը: Այնտեղ աչքերը բարձրացրեց:

- Գնաք բարով,- ասաց,- ես հավանում եմ ձեր տեսությունը: Վախենամ, գործնականում դա չի ստացվի, բայց գրեցեք դրա մասին: Թելադրական է: Զգույշ գրեցեք, ոչ շատ հստակ եւ, ի միջի այլոց, մի՛ մեջբերեք ինձ: Ես ոչինչ չե՛մ ասել, ոչի՛նչ: